


3154

3K33
L-35

34



Պրոլետարքներ բոլոր յերկիցների, միացե՛ք!

Ի. ՍՏԵԼԻՆ

ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

35.5525814
U-90

ԿՈՒՅՐԱՏ • 1934

3K33

L-35 կը

Պարունակած բռնը յերկշների, մայցի 21 JUN 2005

20 NOV 2009

Ի. Ս. Ա. Լ. Ի. Ե.

ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. Լ. Ա. ԲՈՎՀԱՆ
Խմբ. Հ. Գ. Ա. Ա. ՐԵՍԱՆ

540

31036

ԿՈՒՍՀԱՏ

1934

ՅԱՐԵՎԱՆ



3154

Перевод с изд. Партиздата
Москва, 1934

И. СТАЛИН
О ЛЕНИНЕ
Партиздан 1934 Эривань



Ч. Բ. ԼԵՆԻՆ

ԼԵՆԻՆՆ ԻԲՐԵՎ ԹԿԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԵՎ ԱԹԵՀՆՈՐԴ

Հոդված Լենինի ծննդյան 50-ամյակի առիթ

Մարքսիստների յերկու խումբ գոյություն ունի: Դրանք յերկուսն ել աշխատում են մարքսիզմի դրոշի տակ, իրենց համարում են «իսկական» մարքսիստական: Յեղ այնուամենայնիվ դրանք ամենակին ել նույնը չեն: Ավելին, դրանց միջև մի ամբողջ անդունդ կա, վորովհետեւ նրանց աշխատանքի մեթոդները տրամադրուեն հակադիր են:

Առաջին խումբը սովորաբար սահմանափակվում է մարքսիզմն արտաքնապես ընդունելով, այն հանդիսավորակես հռչակելով: Զկարողանալով, կամ չցանկանալով թափանցել մարքսիզմի եյության մեջ, չկարողանալով, կամ չցանկանալով կենսագործել այն, այդ խումբը մարքսիզմի կենդանի ու հեղափոխական դրութները գարձնում է մեռած, վշշինչ չասող ֆորմուլներ: Նա իր գործունեյությունը հիմնում է վոչ թե փորձի, վոչ թե գործնական աշխատանքի հաշվառման վրա, այլ Մարքսից արած ցիտատների վրա: Նա ցուցումներ և դիրեկտիվներ, քաղում է վոչ թե կենդանի իրականության վերլուծումից, այլ անալոգիաներից և պատմական գուգահեռներից: Խոսքի ու գործի իրար չբոնելը—այս և այդ խմբի հիմնական հիմնդությունը: Այստեղից՝ հուսախարումներ և հավիտենական դժգոհություն սեփական բախտից, վորն ամեն քայլափոխում խարսում է նրան, «քթին տալիս»: Այդ խմբի անունն է՝ մենշեկոմ (Ռուսաստանում), ուղղորդունիզմ (Յեղըսպայում): Բնկ. Տիգրոն (Յոդիկեսը) և ոնդոնի համագումարում¹ բավականին գիպուկ բնորոշեց այդ խումբը, առելով, թե նա վոչ թե կանդնած, այլ պառկած է մարքսիզմի տեսակետին:

Յերկրորդ խումբն, ընդհակառակը, հարցի ծանրության կենտրոնը մարքսիզմի արտաքնապես ընդունումից փոխադրում է նրա կիրառման, նրա կենսագործման վրա: Մարքսիզմի իրականաց-



ման այնպիսի ուղիներ և միջոցներ նշել, վորոնք համապատասխանում են իրադրությանը, այդ ուղիներն ու միջոցները փոփոխել, յերբ իրադրությունը փոխվում է, —ահա թե գլխավորապես ինչի վրա այդ խումբը դարձնում է իր ուշագրությունը։ Այդ խումբը դիրեկտիվներ ու ցուցումներ քաղում է զոչ թե պատմական անալոգիաներից և զուգահեռներից, այլ շրջապատող պայմանների ուսումնասիրությունից։ Իր գործունեյության մեջ նա հենգում է վոչ թե ցիտատների ու ասույթների վրա, այլ գործական փորձի վրա, իր յուրաքանչյուր քայլն ստուգելով փորձով, իր սիալներից դաս առնելով և ուրիշներին նոր կյանք կառուցել սովորեցնելով։ Խակաբեն սրանով ե հենց բացատրվում, վոր այդ խմբի գործունեյության մեջ խոսքն ու գործը իրար բռնում էն, և Մարքսի ուսմունքը լիովին պահպանում է իր կենդանի հեղափոխական ուժը։ Այս խմբին լիովին հարցարում են Մարքսի այն խոսքերը, վորոնց համաձայն մարքսիստները չեն կարող բավականանալ աշխարհը բացատրելով, այլ նրանք պետք են ավելի առաջ դնան, վորպեսզի փոփոխեն այն։ Այդ խմբի անունն է՝ բոլշեիզմ, կոմունիզմ։

Այդ խմբի կազմակերպիչն ու առաջնորդը Վ. Ի. Լենինն է։

1. ԼԵՆԻՆՆ ԻԲՐԵՎ ՌՈՒՍՍ.ՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍՍ.ԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Գրողետարական կուսակցության կազմակերպումը Ռուսաստանում ընթացել է հատուկ պայմաններում, վորոնք առարեր են Արևմուտքում բանվորական կուսակցության կազմակերպվելու ժամանակաշրջանի պայմաններից։ Մինչդեռ Արևմուտքում Ֆրանս սիայում, Գերմանիայում, բանվորական կուսակցությունը դուրս յեկավ արհեստական միություններից՝ այդ միությունների և կուսակցությունների լեզու գոյության պայմաններում, բուրժուական հեղափոխությանը հաջորդող պայմաններում, բուրժուական պարլամենտի դոյության պայմաններում, յերբ իշխանության հասած բուրժուազիան կանգնած եր սլովետարիատի դեմ յերես առ յերես, — Ռուսաստանում, ընդհակառակը, պրոլետարական կուսակցության կազմակերպումը տեղի յեր ունենում դաժանագույն արսուլյուտիզմի որով, բուրժուա-դեմոկրատական հեղափոխության սպասումի պայմաններում, յերբ, մի կողմից, կուսակցական կազմակերպությունները լցվում եյին բանվոր դասակարգը բուրժուական հեղափոխության համար ոգտագործե-

լու ցանկությամբ ծարավի բուրժուական «լեգալ» մարքսիստական² տարրերով, մյուս կողմից, կուսակցական լավագույն աշխատողներին ցարական ժանդարմերիան դուրս եր խում կուսակցության շարքերից, արևինչ տարերային հեղափոխական շարժման աճումը պահանջում էր հեղափոխականների այնպիսի շարժունակություն, միախմբված և բավականաչափ կոնսպիրատիվ մարտակայություն, միախմբված և բավականաչափ շարժումն ուղղել կան միջուկի առկայություն, վորը կարողանար շարժումն ուղղել դեպի աբսոլյուտիզմի տապալումը։

Խնդիրն այն եր, վոր վոչխարները ջոկեյինք այծերից, սահմանադատիկինք ոտար տարրերից, տեղերում փորձառու հեղափոխականների կազմակերպելով, նրանց պարզ ծրագիրը ու ամուր տակտիկա տայինք, վերջապես այդ կազմերը համախմբելով լիովին պահպանում է իր կենդանի հեղափոխական ուժը։ Այս խմբին լիովին հարցարում են Մարքսի ուսմունքը լիովին պահպանում և իր կազմակերպության մեջ, վորը լիներ բավականաչափ կոնսպիրատիվ՝ ժանդարմական հարձակումներին դիմագրավելու համար, բայց միաժամանակ մասսաների հնատ բավականաչափ կապված լիներ, հարկավոր բռպեյին նրանց կովի տանելու համար։

Մենշևիկները, հենց նրանք, վոր մարքսիզմի տեսակետին են «պառկած», հարցը պարզ եյին լուծում. վորովհետեւ Արևմուտքում բանվորական կուսակցությունը յեկել է անկուսակցական արհեստակցական միություններից, վորոնք պայքարում են բանվոր դասակարգի տնտեսական դրությունը բարեկավելու համար, ապա Ռուսաստանում, ըստ հնարավորության, պետք ե նույնը կատարել, այսինքն տայաժմ սահմանափակվել տեղերում «բանվորների տնտեսական պայքարով՝ գործառերի և կառավարության գեմ», չստեղծելով ընդհանուր ուսուսական մարտական կազմակերպություն, իսկ հետո... հետո, յեթե մինչ այդ հրապարակ չեն դա արհեստակցական միություններ, անկուսակցական բանվորական համագումար հրավիրել և այն կուսակցություն հայտարարել։

Այն մասին, վոր մենշևիկների՝ ուսուսական պայմանների համար ուսուպիստական այդ «մարքսիստական» «պլանն», ալնուամենայնիվ, յենթադրում է ազիտացիոն լայն աշխատանք, վորն ուղղված է կուսակցականության գաղափարի նվասաւացմանը, կուսակցական կազմերի վոչնչացմանը, պրոլետարիատն առանց իր կուսակցության թողնելուն և բանվոր դասակարգը միբերախների ճանկը գցելուն, — այդ մասին դժվար թե այն ժա-

մանակ գլխի եյին ընկնում մենչեկները և, թերես, բոլշեկներից շատերն ել:

Լենինի մեծագույն ծառայությունը ոռւսական պրոլետարիատի և նրա կուսակցության հանդեպ այն և, վոր նա մենշևիկական կազմակերպական «պլանի» վտանգավորությունը մերկացրեց գետես այն մոմենտին, յերբ «պլանը» հաղիվ եր հղացված, յերբ «պլանի» հեղինակներն իրենք դժգարությամբ եյին պարզ պատկերացնում նրա ուրվագծերը, և, մերկացնելով այն, կատաղի հարձակում մկնեց մենշեկների կազմակերպական սահմարձակության դեմ, պրակտիկների աժառյջ ուշադրությունը կենտրոնացնելով այդ հարցի վրա, վորովհետեւ խոսքը կուսակցության գոյության մասին եր, կուսակցության կյանքի և մահվան մասին:

Ընդհանուրուսական քաղաքական թերթ հիմնել իրեն կուսակցական ուժերի համախմբման կենտրոն, տեղերում կուսակցական կայուն կազմեր կազմակերպել, իրեն կուսակցություն «կանոնավոր մասեր», այդ կազմերը թերթի միջացով ի մի հավաքել և նրանց միախմբել իրեն ընդհանուր-ոռւսական մարտական կուսակցություն՝ խոսիվ նշված սահմաններով, պարզ ծրագրով, ամուր տակտիկայով, միասնական կամքով,— առա թե ինչ պլան զարգացրեց Լենինը իր «Կո ծելատ?», «Շար առերդ, ձեա հազար»³ նշանավոր զբանականում: Այդ պլանի արժանիքն այն եր, վոր նա լիովին համապատասխանում եր ոռւսական իրականությանը և վարպետորեն ընդհանրացնում եր լավագույն պրակտիկների կազմակերպական փորձը: Այդ պլանի համար մշկած պայքարում ոռւսական պրակտիկների մեծամասնությունը վճռականորեն գնաց Լենինի հետեւց, կանգ չառներով պառակտման առջև: Այդ պլանի հաղթանակը հիմք դրեց այն միաձույլ և կոփած կոմունիստական կուսակցության, վորի հավասարը աշխարհը չի ճանաչում:

Մեր ընկերները (վոչ միայն մենշեկները) հաճախ մեղադրում եյին Լենինին, վոր նա չափաղանց մեծ հակում ունի գեղի բանավեճն ու պառակտումը, վոր նա անհաշու պայքար և մղում հուշտվողականների գեմ և այն: Անկառիկած, թե այս և թե այն անկի ուներ իր ժամանակին: Բայց դժգութ չե հասկանալ, վոր կուսակցությունը չեր կարողանա աղատվել ներքին թուլությունից և ցրվածությունից, նա չեր կարողանա իրեն հատուկ ուժին և ամրությանը համնել, յեթե իր միջից չփառագույն վտանգավորությունը լինական, ուղղությունը տարրերը: Բուրժուական տարրերը:

Պապետության դարաշրջանում պրոլետարական կուսակցությունը կարող է աճել և ամրապնդվել միմիտյան այն չափով, ինչ չափով վոր նա իր միջավայրում և բանվոր դասակարգի մեջ պայքար ե մզում սպորտունիստական, հականեղափոխական և հակակուսակցական տարրերի զեմ: Լասամալն արդարացի յեր, ասելով՝ «կուսակցությունը նրանով և ամրապնդվում, վոր մաքրում ե իրենց: Մեղադրողները սովորաբար վկայակոչում եյին գերմանական կուսակցությունը, վորպեսզի հասկանանք նայդեմանի և նոսկեյի՝ Լիբենիսիտի և Լյուքսեմբուրգի հետ ունեցած «միության» ամրող կեղծությունն ու յերեակայականությունը: Յեվ, մվ գիտե՝ գերմանական պրոլետարիատի համար արգյուք ավելի լավ չե՞ր լինի, յեթե գերմանական կուսակցության հեղափոխական տարրերն իր ժամանակին պառակտվեյին նրա հականեղափոխական տարրերից... Վահ, Լենինը հազար անգամ իրավացի յեր, կուսակցությունը տանելով հակակուսակցական և հականեղափոխական տարրերի զեմ անհաշու պայքարի ուղիով: Վորովի հետեւ մեր կուսակցությունը միմիտյան այդպիսի կազմակերպական քաղաքականության հետևանքով կարող եր իր մեջ ստեղծել այն ներքին միասնականությունն ու զարմանալի միաձուլությունը, վորոնց շնորհիվ միայն նու Կերենսկու ժամանակ անհիվան զագին գուրք յեկավ հուլիսյան ճգնաժամից⁵, իր ուսերին տարավ հոկտեմբերյան ապստամբությունը, առանց ցնցումների ապրեց բրեստյան ժամանակաշրջանի⁶ ճգնաժամը, կազմակերպեց հաղթանակը Անտանտայի զեմ և, վերջապես, հասավ այն չտեսնված նկունության, վորի շնորհիվ նա ի վիճակի յե ուղած մոմենտին վերակազմել իր շարքերը և իր անդամներից հարյուր հազարա վորներին կենտրոնացնել ցանկացած մեծ աշխատանքի շուրջը, առանց շիոթությունն մացնելու իր շարքերը:

2. Լենինն Իբրեւ, Ռուսական ԿռՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ

Բայց Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպական արժանիքները գործի մի կողմն են միայն: Կուսակցությունը չեր կարողանա այնպես արագ աճել ու ամրապնդվել, յեթե նրա աշխատանքի քաղաքական բովանդակությունը, նրա

ծրագիրն ու տակտիկան չհամապատասխաննելին ոռուսական իրականությանը, յեթե նրա լոգունգները չվառեյին բանվորական մասսաներին և առաջ չմղեյին հեղափոխական շարժումը:

Այժմ կանցնենք գործի այդ կողմին:

Ռուսական բուրժուադեմոկրատական հեղափոխությունն (1905 թ.) ընթանում եր այնպիսի պայմաններում, վորոնք տարբեր եյին Արևմուտքի հեղափոխական հեղաշրջումների ժամանակաշրջանի պայմաններից, օրինակ, Ֆրանսիայում և Դիրմանիայում: Մինչդեռ Արևմուտքում հեղափոխությունը կատարվեց մասուժակտուրային ժամանակաշրջանի⁸ և դասակարգային անզարգացած պայքարի պայմաններում, յերբ պրոլետարիատը թույլ և փոքրաթիվ եր, չուներ իր սեփական կուսակցությունը, վորը կարողանար ձեակերպել նրա պահանջները, իսկ բուրժուազիան բավականաչափ հեղափոխական եր, վորպեսզի բանվորներին ու պյուղացիներին վստահություն ներշնչեր դեպի ինքը և նրանց դուրս բերեր արիստոկրատիայի դեմ պայքարելու, — Ռուսաստանում, ընդհակառակը, հեղափոխությունն սկսվեց (1905 թ.) մեքենայական ժամանակաշրջանի և զարգացած դասակարգային պայքարի պայմաններում, յերբ համեմատաբար մեծաթիվ և կապիտալիզմի կողմից միախմբած ոռուսական պրոլետարիատն արդեն բուրժուազիայի դեմ մզած մի շարք մարտեր ուներ, ուներ իր կուսակցությունը՝ ավելի միախմբված, քան բուրժուազիան, ուներ իր դասակարգային պահանջները, իսկ ոռուսական բուրժուազիան, վոր բացի այդ ապրում եր կառավարության տված պատվերներով, պրոլետարիատի հեղափոխականությունից բավականաչափ վախեցած եր, վորպեսզի դաշինք վորոներ կառավարության ու կալվաճատերերի հետ՝ բանվորների ու գյուղացիների դեմ: Այն փաստը, վոր ոռուսական հեղափոխությունը բռնկեց Մանջուրիայի դաշտերում ունեցած ուղմական անհաջողությունների⁹ հետևանքով, — այդ փաստը միայն արագացրեց գեղքերը, վոչինչ սակայն, չփոխելով գործի եյության մեջ:

Պայմանները պահանջում եյին, վոր պրոլետարիատը հեղափոխության գլուխ կանգնի, իր շուրջը համախմբի հեղափոխական պյուղացիությունը և վճռական պայքարը մզի ցարիզմի և բուրժուազիայի դեմ միաժամանակ, հանուն յերկրի լիակատար գեմոկրատացման և իր դասակարգային շահերի ապահովման:

Բայց մենշևիկները, հենց նրանք, վոր «պառկած» են մարքսիստեակետին, հարցն իրենց ձեռով լուծեցին, — վորովհետև ոռուսական հեղափոխությունը բուրժուական ե, իսկ բուրժուատական

հեղափոխությունների մեջ գեկավ սրում են բուրժուազիայի ներկայացուցիչները (աես ֆրանսիական և գերմանական հեղափոխությունների «պատմությունը»), ապա պրոլետարիատը չի կարող լինել ոռուսական հեղափոխության հեգեմոն, ղեկավարությունը պետք ե թողնվի ոռուսական բուրժուազիային (հենց այն բուրժուազիային, վորը դավաճանում ե հեղափոխությանը), ոյուղացիությունը նույնպես պետք ե հանձնվի բուրժուազիայի խնամքին, իսկ պրոլետարիատը պետք ե մնա ծայրահեղ ձախ ոպղիցիայի գրության մեջ:

Յեկ մենշևիկները վատթար լիբերալների այդ զգվելի կըրկներգները ներկայացնում եյին իրեմ «իսկական» մարքսիզմի վերջին խոռք:

Լենինի մեծագույն ծառայությունը ոռուսական հեղափոխության առջև այն ե, վոր նա մինչև արմատները մերկացրեց մենշևիկների պատմական զւտահեռությունը և մենշևիկյան «հեղափոխության սխեմայի» ամբողջ վտանգավորությունը, սխեմայի, վորը բանվորական գործը բուրժուազիայի ճանակն եր զգաւմ: Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-զեմովկրատական դիկտատուրա՝ բուրժուազիայի դիկտատուրայի փոխարեն, բուլիգինյան զումայի¹⁰ բոյկոտ և զինված ապրատամբություն՝ զումային մասնակցելու և նրա մեջ որգանական աշխատանքի փոխարեն, «Ճախ բլոկի» գաղափար, յերբ զումանայուամենայնիվ գլուխ յեկավ, և զումայի ամբիոնի ոգտագործում արտադրումայական պայքարի համար՝ կադետական մինիստրության և զումայի ուսակցիոն «պահպանման»¹¹ փոխարեն, կադետական կուսակցության, իբրև հականեղափոխական ուժի դիմ պայքար՝ նրա հետ բլոկ կազմելու փոխարեն, — ահա այսպիսի տակտիկական պլան զարգացրեց Լենինն իր «Դեւ տակտիկ», «Պобեդա կադետօ»¹² նշանափոր բրոցուրների մեջ:

Այդ պլանի արժանիքն այն եր, վոր նա, Ռուսաստանում բուրժուազիմոկրատական հեղափոխության դարաշրջանում պրոլետարիատի դասակարգային պահանջները ուղղակի և վճռականապես ձեակերպելով, հեշտացնում եր անցումը զեզլի սոցիալիստական հեղափոխություն, իր մեջ սաղմնաձև կրում եր պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը: Այդ տակտիկական պլանի համար մղած պայքարում ոռուսական պրակտիկների մեծամասնությունը վճռականորեն և անզարձ գնաց լենինի հետեւց: Այդ պլանի հաղթանակը դրեց այն հեղափոխական տակտիկայի հիմքը, վորի

շնորհիվ մեր կուսակցությունն այժմ ցնցում և համաշխարհային իմպերիալիզմի հիմունքները:

Դեպքերի հետագա զարգացումը, քառամյա իմպերիալիստական պատերազմը և ժողովրդական ամբողջ տնտեսության խարևարդումը, փետրվարյան հեղափոխությունը և հայտնի յերկիշխանությունը, Ժամանակավոր կառավարություն¹³ իրեն բուրժուական հականեղափոխության ոջախ և Պետքրուրդի խորհուրդն իրեն սաղմնավորված պրոլետարական դիկտատուրայի ձեւ, հոկտեմբերյան հեղաշրջումը և սահմանադրի ցրումը, բռնքուական պարլամենտարիզմի վերացումը և Խորհուրդների հանրապետության հոչակումը, իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելը և համաշխարհային իմպերիալիզմի յերաշխը՝ խոսքով «մարքսիստների» հետ մեկտեղ, պրոլետարական հեղափոխության դեմ, վերջապես, սահմանադրին¹⁴ կառչած մինչեւիկների խղճակի գրությունը, վորոնց պրոլետարիատը դեն և շարժել նավից և հեղափոխության ալիքը կապիտալիզմի ավել և հանել, — այդ բոլորը միայն հաստատում եր «Ճետ տակտիկ»-ի մեջ կենինի ձեակերպած հեղափոխական տակտիկայի հիմունքների ճշտությունը: Այն կուսակցությունը, վոր ձեռքին այցպիսի ժառանգություն ուներ, կարող եր համարձակ առաջ լողալ, չվախենալով ստորջրյա քարերից:

Պրոլետարական հեղափոխության մեր ժամանակը, յերբ կուսակցության յուրաքանչյուր լողունք և առաջնորդի յուրաքանչյուր քրագ գործով և սառւպվում, պրոլետարիատն իր առաջնորդներին հատուկ պահանջներ և ներկայացնում: Պատմությունը ճանաչում է պրոլետարական առաջնորդներ, փոթորկութամակի առաջնորդներ, պրակտիկ առաջնորդներ, ինքնազո՞ն ու խիզախ, բայց թեորիայում թույլ: Մասսաները շուտով չեն մուսանում այդպիսի առաջնորդների անունները: Այդպիսիք են, որինակ, կասալը Գերմանիայում, Բլանկին Ֆրանսիայում: Բայց շարժումն ամբողջությամբ չի կարող միմիայն հիշողություններով ապրել նրան հարկավոր են պարզ նպատակ (ծրագիր), ամուր դիմ (տակտիկ):

Մի ուրիշ տեսակի առաջնորդներ ել կան, խաղաղ ժամանակի առաջնորդներ, թեորիայում ուժեղ, բայց կազմակերպության և պրակտիկ աշխատանքի գործերում՝ թույլ: Այդպիսի առաջնորդները ժողովրդական են միմիայն պրոլետարիատի վերին խա-

վում, այն ել միայն մինչև վորոշ ժամանակը: Հեղափոխական դաշտաշխանը հասնելուն պես, յերբ առաջնորդներից հեղափոխական պրակտիկ լողունքներ են պահանջվում, թեորետիկներն իջնում են բեմից, տեղը զիջելով նոր մարդկանց: Այդպիսիք են, որինակ, Պլեխանովը Ռուսաստանում, Կառլցին Գերմանիայում:

Պրոլետարական հեղափոխության և պրոլետարական կուսակցության առաջնորդի պոստում դիմանալու համար անհրաժեշտ ել իր մեջ զուգակցել թեորետիկ զորությունը և պրոլետարական շարժման պրակտիկ-կազմակերպական փորձը: Պ. Ակսելրուդը, յերբ մարքսիստ եր, կենինի մասին գրում եր, վոր նաշիքը մեջ բախտավոր կերպով միացնում և լավ պրակտիկի փորձը թեորետիկ կրթության ու քաղաքական լայն մտահորիզոնի հետ (անս Պ. Ակսելրուդի առաջաբանը կենինի «Յաճախ ռուսական սույալ-դեմոկրատօ» ըրոշյուրին)¹⁵: Թե՝ այժմ ընկ կենինի մասին ինչ կասեր «կուլտուրական» կապիտալիզմի իդեոլոգ Պ. Ակսելրուդը, — դվար չե զլիի ընկնել: Բայց մեզ համար, վորոնք կենինին մոտիկից են ճանաչում և կարող են գործին որյեկտիվորեն նայել անտարտկուսելի յե, վոր կենինի մեջ այդ հին հատկությունը լիովին պահպանվել եւ Այդ բանում, իմիջիայլոց, պետք ե փնտուի այն փաստի բացատրությունը, վոր կենինը, և հենց նա յե այժմ հանդիսանում աշխարհում ամենից ուժեղ և առենից կոփմած պրոլետարական կուսակցության առաջնորդը:

«Արական» № 86, 1920 թ. ապրիլ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Ինձ թվում ե, թե կարիք չկար գրելու «ընկ». Լենինի մասին՝ հանգստանալիս» այժմ, յերբ հանգիստը վերջանում ե, և ընկ. Լենինը շուտով աշխատանքի կվերադառնա: Բացի այդ, յես այնքան շատ տպավորություններ ունեմ և նրանք այնպես արժեքավոր են, վոր նրանց մասին գրել փոքրիկ դիտողության ձևով, ինչպես այդ պահանջում ե «Правда»-ի խմբագրությունը, այնքան ել նպատակահարմար չե: Բայց և այնպես հարկ ե գրելու, վորովհետև խմբագրությունը պնդում ե:

Յես պատեհություն եմ ունեցել ուզմաճակատում հանգիստելու հին մարտիկների, վորոնք «անդադրում» միքանի որ անցկացնելով անընդհատ մարտերում, առանց հանգստի ու քնի, հետո կովից վերադառնում ելին ուրիշականների պես, հնձվածի նման վայր ելին ընկնում ե, «ամբողջ տասնութ ժամ շարունակ քնելով», հանգստից հետո թարմացած վեր ելին կենումնոր մարտերի համար, առանց վորոնց նրանք «ապրել չեն կարող»: Ընկ. Լենինը նրա հետ իմ առաջին տեսակցության ժամանակ՝ հուլիսի վերջին, մեկուկես ամավագադարից հետո ինձ վրա հին մարտիկի հենց արդարիս տպավորություն թողեց, վորն ուժասպառ անող անընդհատ մարտերից հետո կարողացել ե հանգստանալ և թարմացել ե հանգստից հետո: Թարմ ու նորոգված, բայց հոգնածության, գերհոգնածության հետքերով:

— «Չի կաթելի, վոր յես լրադրեր կարդամ, — հեգնորեն նկատում ե ընկ. Լենինը, — չի կարելի խոսել քաղաքականության մասին, յես սեղանի վրա ընկած յուրաքանչյուր թղթի կտորի կողքից ջանադրությամբ անցնում եմ, վախենալով, վոր չընի թե դուրս կա, վոր դա լրադիր ե և չինի թե դրանից դիսցիպլինայի խախտում դուրս կա»:

* Առաջին անգամ տպագրված ե «Правда»-ի №215 նկարագրգ հավելություն 1922 թ. սեպտեմբերի 24-ին: Հավելվածը կոչվում եր՝ «Տօն. Լենին և Ռուսական պատմություն»:

Յես հոհուում եմ և մինչև յերկինք բարձրացնում ընկ. Լենինի դիսցիպլինայի յենթարկված լինելը: Հենց այդտեղ ել ծիծագում ենք բժիշկների վրա, վորոնք չեն կարողանում հասկանալ քաղաքագետները չեն կարող չխոսել քաղաքականության մասին:

Ընկ. Լենինի մեջ ապշեցնում ե հարցեր տալու ագահությունը և աշխատանքի ձգտումը, անհաղթահարելի ձգտումը Նկատելի յե, վոր սովել ե: Եսերների պրոցես¹⁶, ձենովա և Համագալ¹⁷, բերքի սպասելիքներ, արդյունաբերություն և ֆինանսներ—այս բոլոր հարցերը հաջորդում են մեկը մյուսին: Նա չի շտապում իր կարծիքն արտահայտելու, գանգատվելով, վոր նետ և մատցել գեղքերից, նա գլխավորապես հարցություրը ե անում և նկատի առնում: Շատ աշխատանում ե, տեղեկանալով, վոր լավ բերք ե սպասվում:

Բոլորովին այլ պատկերի հանդիպեցի յես մի ամիս անց: Այս անգամ ընկ. Լենինը շրջապատված ե գրքերի ու լրագրերի կույտով (նրան թույլ ելին տվել առանց սահմանափակման կարգալ և խոսել քաղաքականության մասին): Այլևս չկան հոգնածության, ուժաւալպառության հետքերը: Զկան աշխատանքի ջղային ձգտման նշաններ, — սովոր անցել ե: Հանգստությունն ու վստահությունը լիովին վերադառնել են նրան: Մեր հին լենինը և վոր խորամանկորեն նայում ե խոսակցին, աչքը կկոցած:

Դրա փոխարեն մեր զրույցն ել այս անգամին ավելի աշխատքնույթ ունի:

Ներքին գրություն... Բերք... Արդյունաբերության դրություն... Ռուբլու կուրս... Բյուջե¹⁸...

— «Դրությունը ծանը ե: Բայց ամենածանը որերը հետեւ կում են մատցել: Բերքն արմատապես թեթևացնում ե գործը: Լավ բերքի արդյունքը կլինի արդյունաբերության ու ֆինանսների բարելավումը: Այժմ բանն այն ե, վոր պետությունն ազատենք ավելորդ ծախսերից, կրծատելով մեր հիմնակներն ու ձեռնարկությունները և դրանք վորակապես բարելավելով: Այդ գործում հարկավոր ե հատուկ ամրություն, և այն ժամանակ դուրս կպրծնենք, անջուշա դուրս կպրծնենք»:

Արտաքին գրություն... Անտանտա... Ֆրանսիայի վարքադիմ... Անգլիա և Գերմանիա... Ամերիկայի գերը...

— «Նրանք ագան են և իրար խորապես ատում են: Կկովը տեսն: Մենք շտապելու բան չունենք: Մեր ուղին ճշշտ ե, մենք հաշտության ու համաձայնության կողմանակից ենք, բայց մենք

ստրկության ու համաձայնության ստրկական պայմաններին դեմ ենք: Պետք ե զեկը պինդ բռնել և գնալ իր ուղիով, չենթարկու վելով վհչ շողոքորթության և վոչ ել վախեցման»:

Եսերներ ու մենափիկներ, եմիքրացիա, նրանց կատաղի ազիտացիան Խորհրդային Ռուսաստանի դեմ:

— «Այն, նրանք նպատակ են դրել պասկազրկել Խորհրդային Ռուսաստանը: Նրանք հեշտացնում են իմարիխալիստների պայքարը Խորհրդային Ռուսաստանի դեմ: Ընկել են կապիտալիզմի տիզմը և անդունդն են գլորվում: Թող թափալվեն: Նրանք վաղուց են մեռել բանվոր դասակարգի համար»:

Սպիտակ մամուլ... Անհավանական առասպելներ Լենինի մահվան մասին՝ մանրամասների նկարագրություններով...

Ընկ, Լենինը ժպտում ե և նկատում. «Թող ստեն ու միիթարվեն, մեռնողներից չպետք ե խլիլ վերջին միիթարությունը»:

1922 թ. սեպտեմբերի 15:

ԼԵՆԻՆԻ ՄԱՀՎԱՆ ԱԹԹՈՎ

Ճառ Խորհուրդների II նամակումարում 1924 թ. հունվարի 26-ին Ընկերներ: Մենք, կոմունիստներս, հատուկ խառնվածքի մարդիկ ենք: Մենք հատուկ կտորից ենք ձեված: Մենք նրանք ենք, վորոնք պրոլետարական մեծ ատրատեգի բանակը, ընկենինի բանակն ենք կազմում: Զկա ավելի բարձր բան, քան այդ բանակին պատկանելու պատիվը: Զկա ավելի բարձր բան, քան այն կուսակցության անդամի կոչումը, զորի հիմնաքիրն ու զեկավարը ընկ. Լենինն ե: Ամեն վոքի վիճակված չէ այդպիսի կուսակցության անդամ լինել: Ամեն վոքի վիճակված չե այդպիսի կուսակցության անդամության հետ կապված ձախորդություններին ու փոթորիկներին դիմանալ: Բանվոր գասակարգի վորդիները, կարիքի ու պայքարի վորդիները, աներկանական զրկանքների ու հերոսական ջանքերի վորդիները — ահա թե ովքեր ամենից առաջ պետք ե լինեն այդպիսի կուսակցության անդամները: Ահա թե ինչու լենինյանների կուսակցությունը, կոմունիստների կուսակցությունը գրա հետ մեկտեղ կոչվում և բանվոր գասակարգի կուսակցություն:

Հեռանալով մեզնից, ընկեր Լենինը մեզ ավանդ բողեց՝ բարձր պահել և պահուր պահանձել կուսակցության անդամի մեծ կոչումը: Յերգվում ենք, մեզ, ընկեր Լենին, զոր մենք պատվով կետարենք ին այդ պատվիրանը:

Ընկեր Լենինը քսանչինգ տարի կոփել գասակարել և մեր կուսակցությունը և նրանից դարբնել ե ամենաամուր և ամենա կոփված բանվորական կուսակցությունն աշխարհում: Յարիզմի և նրա ոպրիչնիկների հարգածները, բուրժուազիայի ու կալվածատերերի կատաղությունը, Կոլչակի ու Դենիկինի զինված հարձակությունը, Անգլիայի ու Ֆրանսիայի զինված միջամտությունը, բուրժուատկան հարցուրաբերան մամուլի սուտն ու բամբասանքը, այդ բոլոր կարիճները քառորդ գարի ընթացքում անփոփոխ

Կերպով ընկնում եյին մեր կուսակցության գլխին: Բայց մեր կուսակցությունը կանգնած եր ժայռի պես, հետ մղելով թշնամիների անհամար հարվածները, և բանվոր դասակարգին տանելով առաջ, գեղի հաղթանակ: Մեր կուսակցությունը դաժան մարտերի մեջ կոփեց իր շարքերի միասնությունը ու միաձուլությունը: Միասնությամբ ու միաձուլությամբ նա հաղթանակ ձեռք բերեց բանվոր դասակարգի թշնամիների դեմ:

Հեռանալով մեզնեց, ընկեր Լենինը մեզ ավանդ բողեց աչքի լույսի պես պահպանել մեր կուսակցության միասնությունը: Յերդվում ենք ֆեզ, ընկեր Լենին, վոր մենք պատվով կկատարենք ու այդ պատվիրանը ևս:

Ծանր ու անտառների յերանվոր դասակարգի վիճակը: Տանջալի ու ծանր են աշխատավորների տառապանքները: Ստրուկներ և ստրկատերներ, ճորտեր և ճորտատերներ, զյուղացիներ և կալվածատերներ, բանվորներ և կապիտալիստներ, կեղեքվողներ և կեղեքիչներ,—այդպես եր կառուցվում աշխարհը դարերից ի վեր, այդպիսին նա մնում է և այժմ յերկրների ահազին մեծամասնության մեջ: Աշխատավորները դարերի ընթացքում տասնյակ ու հարյուրավոր անդամներ փորձել են իրենց ուսերից վայր գցել կեղեքիչներին և իրենց գրության տերը դառնալ: Բայց յուրաքանչյուր անգամ, ջախջախված՝ անարգված, նրանք հարկադրված են յեղել նահանջել, սրտի խորքում պահելով վիրավորանքն ու նվաստացումը, զայրույթն ու հուսահատությունը և հայցքներն ուղղելով անձանոթ յերկնքին, վորտեղ նրանք հույս ունեցին իրություն գտնել: Մարկության շղթաները մնում եյին նույնությամբ կամ հին շղթաները փոխարինվում եյին նորերով, վորոնք նույնքան ծանր ու ստրացուցիչ եյին: Աշխատավորների կեղեքված ու վոտահարված մասսաներին մեր յերկրում միայն հաջողվեց ուսերից վայր նետել կալվածատերների ու կապիտալիստների տիրապետությունը և նրա տեղը դնել բանվորների ու գյուղացիների տիրապետությունը: Դուք գիտեք, ընկերներ, և այժմ ամբողջ աշխարհն ե այդ ընդունում, վոր այդ վիթխարի պայքարը զեկութառում եր ընկեր Լենինը և նրա կուսակցությունը: Լենինի մեծությունն ամենից առաջ այն ե, վոր նա, ստեղծելով Խորհրդների հանրապետությունը, հենց գրանով ամբողջ աշխարհի կեղեքված մասսաներին ցույց տվեց, վոր կորսված չե փրկության հույսը, վոր կալվածատերների ու կապիտալիստների տիրապետությունը մշտնջենական չե, վոր աշխատանքի թագավորու-

թյունը կարելի լն ստեղծել հենց աշխատավորների ջանքերով, զոր աշխատանքի թագավորությունը պետք ե ստեղծել յերկրի յերեսին, և վոչ թե յերկնքում: Դրանով նա ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների սրտերը վասեց ազատության հույսով: Դրանով ե հենց բացատրվում այն փաստը, վոր Լենինի անունը դարձել ե աշխատավոր ու շահագործվող մասսաների ամենասիրելի անունը:

Հեռանալով մեզնեց, ընկեր Լենինը մեզ ավանդ բողեց՝ պահպանել ու ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան: Յերդվում ենք ֆեզ, ընկեր Լենին, վոր մենք չենք ինայի մեր ուժերը, վորպեսզի պատվով կատարենք ու այդ պատվիրանը ևս:

*3455
2002/3036*

Պրոլետարիատի գիշտատուրան մեր յերկրում ստեղծվեց բանվորների ու գյուղացիների դաշինքի հիման վրա: Այդ՝ Խորհրդների հանրապետության առաջին և արմատական հիմքն է: Բանվորներն ու գյուղացիները կապիտալիստներին ու կալվածատերներին չեյին կարողանա հաղթել առանց այդպիսի դաշինքի առկայության: Բանվորները չեյին կարողանա ջախջախել կապիտալիստներին առանց գյուղացիների ոժանդակության: Գյուղացիները չեյին կարողանա ջախջախել կալվածատերներին առանց բանվորների կողմից զեկավարություն ունենալու: Այդ մասին և խոսում քաղաքացիական պատերազմի ամբողջ պատմությունը մեր յերկրում: Բայց Խորհրդների հանրապետության ամրապնդման համար մղված պայքարը բնակ ավարտված չե,—նա միայն նոր ձև և ընդունել, Բանվորների ու գյուղացիների դաշինքն առաջ ուղղմահան դաշինքի ձև ուներ, վորովհետեւ ուղղված եր Կոլչակի և Ֆինիկինի վեմ: Այժմ բանվորների ու գյուղացիների դաշինքը պետք ե ընդունի անտեսական աշխատակցության ձև քաղաքի միջն, բանվորների ու գյուղացիների միջն, վարովինետեւ այդ դաշինքն ուղղված ե վաճառականի ու կուլակի դեմ, վորովհետեւ դա նպատակ գյուղացիների ու բանվորների փոխադարձ մատակարարումն ամեն անհրաժեշտ բանով: Դուք գիտեք, վոր վոչով այնպիս հաստատակամորեն չեր անցկացնում այդ խորիրը, ինչպես ընկ. Լենինը:

Հեռանալով մեզնեց, ընկեր Լենինը մեզ ավանդ բողեց՝ բնլոր ուժերով ամրապնդել բանվորների ու գյուղացիների գափենքը: Յերդվում ենք ֆեզ, ընկեր Լենին, վոր մենք պատվով կկատարենք ես այդ պատվիրանը ևս:

Լենինի մասին—2



Խորհուրդների Հանրապետության յերկրորդ հիմքը մեր յերկրի աղջությունների աշխատավորների դաշինքն եւ մուսները և ուկրա- լինացիները, բաշկիրները և բելոռուսները, վրացիները և աղբյե- ջանցիները, հայերը և գաղատանցիները, թաթարները և կիրդեղները ուղղեկները և թուրքմենները, — զրանք բոլորը միանման շահա- գրգոված են, վոր ամրանա պրոլետարիատի դիկտատուրան։ Վոչ միայն պրոլետարիատի դիկտատուրան և այդ ժողովուրդներին աղա- տում շղթաներից ու ճնշումից, այլև այդ ժողովուրդներն են մեր Խորհուրդների Հանրապետությունն ազատում բանվոր գասակարգի թշնամիների դավերից ու հարձակումներից՝ իրենց անվերապահ նվիրվածությամբ Խորհուրդների Հանրապետությանը, նրա հա- մար զոհվելու իրենց պատրաստակամությամբ։ Ահա թե ինչու ընկեր լենինը մեզ անդադար ասում եր, թե անհրաժեշտ ե, վոր մեր յերկրի ժողովուրդները կամավոր դաշինք ունենան, անհրա- ժեշտ ե, վոր նրանք յեղբայրուեն աշխատակցեն Հանրապետու- թյունների Միության շրջանակներում։

Հեռանալով մեզնից, ընկեր լենինը մեզ ավանդ բաղեց՝ ամրացնել ու բնդլայնել Հանրապետություն- ների Միությունը։ Ենք վում ենք բնկեր լենին, վոր մենք պատվով կետարենք ու այդ պատվիրանը իս:

Պրոլետարիատի դիկտատուրայի յերրորդ հիմքը մեր Կարմիր բանակն ե, մեր Կարմիր նավատորմը։ Լենինը մեզ շատ անգամ ե ասել, թե կապիտալիստական-պետություններից մեր նվաճած ժամանակավոր դադարը կարող է կարճատես լինել։ Լենինը մեզ շատ անգամ ե մատնանշել վոր Կարմիր բանակի ամրացումը և նրա դրության լավացումը մեր կուսակցության կարևորագույն խըն։ դիրներից մեկն ե։ Քերպոնի ուլտիմատումի և Գերմանիայի ճգնա- ժամի¹⁹ հետ կապված դեպքերն ավելորդ անգամ հաստատեցին, վոր լենինը, ինչպես միշտ, իրավացի յեր։ Արդ յերգվենք, ընկեր- ներ, վոր մենք ուժերս չենք խնայի, վորպեսզի ամրացնենք մեր Կարմիր բանակը, մեր Կարմիր նավատորմը։

Մեր յերկիրը կանգնած ե մի հսկա ժայռի պես, շրջապատ- ված բուրժուական պետությունների ովկիանոսով։ Ալիքներ ա- լիքների հետեւից գլորվում են նրա վրա, սպառնալով հեղեղել ու խորտակել։ Իսկ ժայռը շարունակում ե անդրդվելի կանգ- նած մնալ ինչնում ե նրա ուժը։ Վոչ միայն նրանում, վոր մեր յերկիրը կանգնած ե բանվորների ու գյուղացիների դաշին- քի վրա, վոր նա մարմնավորում ե աղատ աղգություն- ների դաշինքը, վոր նրան պաշտպանութ ե Կարմիր բանակի և

Կարմիր նավատորմի հզոր ձեռքը։ Մեր յերկրի ուժը, նրա ամրու- թյունը, նրա զիմացկունությունը նրանումն ե, վոր նա խորին համակրանք ու անխորտակ օժանդակություն ունի ամբողջ աշխար- հի բանվորների ու գյուղացիների սրտերում։ Ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները ցանկանում են Խորհուրդների Հանրապետությունը պահպանել իրեւ մի նետ, վոր ընկ. լենինի անզրեալ ձեռքով նետված և թշնամիների բանակատեղը, իրեւ ճնշումից ու շահագործումից փրկվելու իրենց հույսերի հենարան, իրեւ աղատության ուղին ցույց տվող ճիշտ փարոս։ Նրանք ցանկանում են նրան պահպանել, և նրանք կալվածատերերին ու կապիտալիստաներին թույլ չեն տա ավերել նրան։ Մեր ուժը զրա- նումն ե, Դրանումն ել հենց ամբողջ աշխարհի բուրժուազիայի ուժը։ Դրանումն ել հենց ամբողջ աշխարհի բուրժուազիայի թույլությունն ե։

Լենինը Խորհուրդների Հանրապետությանը յերեք չի նայել իրեւ ինքնանպատակի։ Նա այդ միշտ դիտել ե իրեւ Արևմուտքի և Արևելքի յերկրներում հեղափոխական շարժումն ուժեղացնելու մի անհրաժեշտ ողակ, իրեւ կապիտալի վրա ամբողջ աշխարհի աշխա- տավորների հաղթանակը հեշտացնելու մի անհրաժեշտ ողակ։ Լենինը գիտեր, վոր միմիայն այդպիսի ըմբռնումն ե ճիշտ՝ վոչ միայն միջազգային տեսակետից, այլև Խորհուրդների Հանրա- պետությունը պահպանելու տեսակետից։ Լենինը գիտեր, վոր միայն այդ ճանապարհով կարելի յե ամբողջ աշխարհի աշխա- տավորների սրտերը վառել աղատության համար մղող գնաւ- կան մարտերի համար։ Ահա թե ինչու նա, պրոլետարիատի հանճարեղ առաջնորդներից ամենահանճարեղը, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման հենց հետևյալ որը դրեց բանվոր- ների ինտերնացիոնալի հիմքը։ Ահա թե ինչու նա չեր դադա- րում ընդլայնելու և ամրապնդելու ամբողջ աշխարհի աշխատա- վորների միությունը՝ Կոմունիստական ինտերնացիոնալը։

Այս որերին զուրք տեսաք տասնյակ ու հարյուր հազարավոր աշխատավորների ուխտակնացությունը դեպի ընկեր լենինի գաղաղը։ Վորոշ ժամանակ հետո զուրք կտեսնեք միլիոնավոր աշխատավորների ներկայացուցիչների ուխտակնացությունը զեպի ընկեր լենինի գերեզմանը։ Կարող եք չկասկածել, վոր միլիոնավորների ներկայացուցիչների հետեւց կծզվին տասնյակ ու հարյուր միլիոնավորների ներկայացուցիչները աշխարհի բու- րժուազիայից, վորպեսզի վկայեն, վոր ընկեր լենինը վոչ միայն ուղարկան պրոլետարիատի, վոչ միայն յելքուազական բանվոր-

Ների, վոչ միայն քաղութային Արևելքի առաջնորդն եր, այլև
յերկրագնդի գողջ աշխատավորության առաջնորդը:

Հեռանավ մեզնից, բնիեր Լենինը մեզ ավտոնդ
բողեց հավատարիմ մնալ Կոմունիստական Ինտերնա-
ցիոնալի սկզբունքներին. Յերդվում ենք ինք, բնիեր
Լենին, վոր մենք մեր կյանքը չենք խնայի, վորպեսզի
ամրապնդենք ու բնդլայնենք ամբողջ աշխարհի ա-
խտավորների միուրյունը՝ Կոմունիտական Ինտե-
ռացիոնալը:

ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

Ճառ կրեմլյան կարսանճերի յերեկույրում
1924 թ. հունվարի 28-ին

Հնկերներ Ինձ ասացին, թե այստեղ ձեզ մոտ հուշերի յե-
րեկո յե կազմակերպված Լենինի մասին, ինկ յես հրավիրված
եմ յերեկույթին իբրև զեկուցողներից մեկը. Յես կարծում եմ,
վոր Լենինի գործունեյության մասին կապակցված մի զեկու-
ցում տալու անհրաժեշտություն չկա: Յես կարծում եմ, վոր
ավելի լավ կլիներ սահմանափակվել մի շարք փաստեր հաղորդե-
լով, վորոնք նշում են Լենինի միջանց առանձնատիպություն-
ներն իբրև մարդու և իբրև գործչի: Այդ փաստերի միջն գուցե
ներքին կապ ել չկինի, բայց այդ չի կարող վճռական նշա-
նակություն ունենալ Լենինի մասին ընդհանուր պլտտկերացում
ստանալու համար: Համենայն գեպս, յես տվյալ զեպքում
հնարավորություն չունեմ ձեզ ավելին տալու, քան այն, ինչ վե-
րը խոստացա:

ԼԵՆԻՆ ԱՐԾԻՎԸ

Յես Լենինի հետ ծանոթացա առաջին անգամ 1903 թ., ծիշտ
ե, այդ ծանոթությունն անձնական չեր, այլ հեռակա զրագրության
կարգով: Բայց նա իմ մեջ թողել ե անջնջիլի տպագրություն,
վորը յես չեմ մոռացել կրւակցության մեջ իմ ամբողջ աշխա-
տանքի ժամանակ: Յես այն ժամանակ Սիրիբում եյի, աքսորում:
90-ական թվականների վերջից և մանավանդ 1901 թվականից,
«Искра»-յի²⁰ հրատարակումից հետո, Լենինի հեղափախական
գործունեյության հետ իմ ունեցած ծանոթությունն ինձ այն հա-
մոզման բերեց, վոր մենք հանձին Լենինի արտասովոր մի մարդ
ունենք: Նա այն ժամանակ իմ աշխատ կուսակցության հասարակ
մի զեկավար չեր, նա նրա փաստական ստեղծողն եր, վորովհետև
միակ նա յեր հասկանում մեր կուսակցության ներքին եյտությունը
և անհետաձգելի կարիքները: Յերբ յես նրան համեմատում եյի

մեր կուսակցության մնացած ղեկավարների հետ, ինձ ամբողջ ժամանակ թվում եր, թե Լենինի զինակիցները—Պետքանովը, Մարտովը, Ակսելրոդը և ուրիշները—մի ամբողջ գլխով ցածր են Լենինից, թե Լենինը նրանց համեմատությամբ վոչ թե պարզապես ղեկավարներից մեկն ե, այլ բարձրագույն տիպի մի ղեկավար, լիռան արծիվ, վորը պայքարի մեջ յերկյուղ ասած բոնը չի ճանաչում և կուսակցությունը համարձակութեն առաջ և տանում ուսւական հեղափոխական շարժման անծանոթ ուղիներով։ Այդ տպավորությունն այնքան խորն եր թափանցել իմ հոգում, վոր յես անհրաժեշտություն գգացի այդ մասին գրել իմ մոտիկ բարեկամին, վորն այն ժամանակ տարագրության մեջ եր, նրանից կարծիք պահանջելով։ Միքանի ժամանակ հետո, Սիբիրում աքսորական լինելով, —այդ 1903 թ. վերջն եր,—յես իմ բարեկամից ստացա սքանչացած մի պատասխան և Լենինի պարզ, բայց խորապես բովանդակալից նամակը, վորին, ինչպես պարզվեց, իմ բարեկամը ծանոթացրել եր նամակիս։ Լենինի գրությունը համեմատաբար փոքր եր, բայց տալիս եր մեր կուսակցության պրակտիկայի համարձակ, աներկյուղ քննադատությունը և կուսակցության աշխատանքի ամբողջ պլանի զարմանալի պարզ ու հակիրճ շարադրանքը մոտավոր ժամանակաշրջանի համար։ Միայն Լենինն եր կարողանում ամենալազար բաների մասին գրել այդպես հասարակ ու պարզ, սեղմ ու համարձակ—յերբ յուրաքանչյուր ֆրազ վոչ թե խոսում, այլ կրակում ե։ Այդ պարզ ու համարձակ գրությունն ինձ ել ավելի ամրապնդեց նքանում, վոր հանձին Լենինի մենք ունենք մեր կուսակցության լիռան արծիվը։ Յես ինձ ներել չեմ կարող, վոր Լենինի այդ նամակը, ինչպես և շատ ուրիշ նամակներ, յես կրակի մատնեցի, ըստ ինչ ընդհատակյա աշխատողի սովորության։

Այդ ժամանակվանից սկսվեց իմ ծանոթությունը Լենինի հետ

ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Յես Լենինին առաջին անգամ հանդիպեցի 1905 թ. ղեկամբերին՝ բոլշևիկների Տամմերֆորսի (Ֆինլանդիայում) կոնֆերանսում։ Յես հույս ունեյի տեսնելու մեր կուսակցության լեռան արծիվին, մեծ մարդուն, մեծ վոչ միայն քաղաքականապես, այլ, յեթե կուզեք, նաև ֆիզիկապես, վորովհետև Լենինն իմ լեռակայության մեջ պատկերանում եր իբրև մի հսկա, բարեկազմ ու վայելչատես։ Իսկ վորպիսին եր իմ հիասթափությունը, յերբ

տեսա մի ամենասովորական մարդ, միջակից ցած հասակով, վորը վոչնչով, բառացիորեն վոչնչով չեր տարբերվում առվորական մահկանացուներից...

Ընդունված ե, վոր «մեծ մարդ» սովորաբար պետք ե ուշանա ժողովներին, վորպեսզի ժողովի անդամները սրտատրով սպասեն նրա հայտնվելուն, ընդգործում մեծ մարդու հայտնվելուց առաջ ժողովի անդամները նախադպուշացնում են՝ «սըն... հանգարատ...» ևա զալիս ե։ Այդ ծիսականությունն ինձ ավելորդ չեր թվում, վորովհետև տպավորություն ե թողնում, հարգանք և ներշնչում։ Իսկ վորպիսի հիասթափություն, յերբ իմացա, վոր Լենինը ժողովի յե յեկել պատգամավորներից ավելի վաղ ե, մի անկյուն քաշված՝ հասարակ մարդու պես զրուցում ե, ամենասովորական կերպով զրուցում կոնֆերանսի ամենասովորական պատգամավորների հետ։ Զեմ ծածկի, վոր այդ բանն ինձ տյա ժամանակ թվաց վորոշ անհրաժեշտ կանոնների վորոշ խախտում։

Միայն հետագայում յես հասկացա, վոր Լենինի այդ պարզությունն ու համեստությունը, աննկատելի մնալու կամ, համենայն զեպս, աչքի չզարնելու և իր բարձր դիրքը շշեշտելու այդ ձգտումը, —այդ գիծը Լենինի ամենասուժեղ կողմերից մեկն ե, իբրև նոր մասսաների, մարդկության ամենախոր Շներքնախավերից պարզ ու սովորական մասսաների նոր առաջնորդի։

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Այդ կոնֆերանսում յեկելի եյին Լենինի արտասանած յերկու ճառերը՝ ընթացիկ մօմենտի և ազգաբային հարցի մասին։ Դրանք, գժիգախտաբար, չեն պահպանվել։ Այդ վոգեշունչ ճառեր եյին, վոր բուռն խանդովառությամբ համակեցին ամբողջ կոնֆերանսը Համոզման անսովոր ուժը, հասարակ ու պարզ փաստարկումը, կարճ ու ամենին հասկանալի ֆրազները, ցուցամության բացակայությունը, զլխապտույտ ժեստերի և տպավորությունը գործելու ձգտող եֆեկտավոր ֆրազների բացակայությունը, —այդ ամենը Լենինի ճառերը նպաստավոր կերպով տարբերում եր սովորական «պատամենանտական» հոնտորների ճառերից։

Բայց ինձ այն ժամանակ Լենինի ճառերի այդ կողմը չեր հմայում։ Ինձ հմայում եր Լենինի ճառերի մեջ տրամաբանության այն անդիմադրելի ուժը, վորը միքիչ չոր, բայց դրա փոխարեն հիմնավորապես համակում և լուրանը, աստիճանաբար

հեկտրականացնում նրան և հետո, ինչպես տառամ են, գերի վերցնում առանց մետքրդի: Յես հիշում եմ, թե ինչպես այն ժամանակ պատգամավորներից շատերն առում եյին. Այնինի ձառերի մեջ տրամաբանությունը մի ինչ վոր ամենազոր շղափուկներ են, վորոնք քեզ չորս կողմից տքցանի պես ցանցում են և վորոնց գրնից գուրս պլրծնելու ուժ չկա. կամ անձնատուր յեղիր, կամ վճռիր լիովին խորտակվելո:

Յես կարծում եմ, վոր Անինի ձառերի մեջ այդ առանձնահատկությունը նրա հսկաբական արգեստի ամենառուժեղ կողմն եւ.

Ա.Ի.Ա.Ն.Ց ՏՐՏՈՒՆՁԻ

Յերկրորդ անգամ յես Անինին հանդիպեցի 1906 թ. մեր կուսակցության Ստոկհոլմի համագումարում²¹: Հայոնի յե, վոր այդ համագումարում ըոլցելիկները փոքրամասնություն կազմեցին, պարտություն կրեցին: Յես այդ ժամանակ Անինին առաջին անգամն եյի առանում պարտվածի գերում: Նա մաղաչափ անգամ նմտն չեր այն առաջնորդներին, վորոնք պարտությունից հետո արտնջում և լքվում են: Ընդհակառակը, պարտությունը Անինին դարձրել եր խոտած յետանդ, վոր իր կողմանիցներին վորդորում ե նոր մարտերի, աղաղա հաղթանակի համար: Յես խոռում եմ Անինի պարտության մասին: Բայց այդ բնչ պարտություն եր վոր: Գետք եր նայել Անինի հակառակորդներին, Ստոկհոլմի համագումարի հաղթողներին՝ Պետքանովին, Ակսելլուդին, Մարտովին և ուրիշներին: Նընք շատ քիչ եյին նման իսկական հաղթողների, վորովհետև Անինը մենշեղմի իր անինա քննաշատություն մեջ նրանց վրա, ինչպես տառամ են, վորջ տեղ չեր թողել Հիշում եմ, ինչպես մենք, ըոլցելի պատգամավորներս, իրար զիմի հավաքված, նայում եյինք Անինին, խորհուրդ հարցնելով նրանից: Միքանի պատգամավորների հառերում յերեսում եր հոգնածություն, վհաառություն: Միտո ե, թե ինչպես Անինը նման խոսքերին իրեւ պատասխան ատամների արանքից կծու կերպով ասոց: «Միք տրտնջա, ընկերներ, մենք անշուշտ կհաղթենք, վորովհետև մենք իրավացի յենք»: Ատելություն դեպի արտնջացող ինտելիգենտները, վստահություն իր ուժերին, հավատ հաղթանակին—ահա թե ինչի մասին եր խոսում մեզ հետ այն ժամանակ Անինը: Զգում եյիք, վոր ըոլցելիկների պարտությունը ժամանակավոր ե, վոր ըոլցելիկները պետք ե հաղթեն մոտիկ ապագայում:

«Չորտնջալ պարտության առթիվ»—այդ՝ Անինի գործունեցության մեջ հենց այն առանձնահատկությունն ե, վորը նրան ոգ նում եր իր շուրջը մինչև վերջը անձնվեր և իր ուժերին հավատացող բանակ համախմբելու:

Ա.Ի.Ա.Ն.Ց ՊԱՐՄԵՆԿՈՏՈՒԹՅԱՆ

Հետեւալ համագումարում, 1907 թ. Լոնդոնում բոլցելիկները հաղթող դուրս յեկան: Յես այն ժամանակ Անինին առաջին անգամն եյի տեսնում հաղթողի զերում: Սովորաբար հաղթանակը պատում և առաջնորդներից վոմանց վլուխները, նրանց դարձնում և գոռող ու պարծենկատ նման գեղքերում ամենից հաճախ սկսում են հաղթանակ տոնել դափնիների վրա հանգստանաբ: Բայց Անինը մազաշափ անգամ չեր այդպիսի առաջնորդներին Ընդհակառակը, հենց հաղթանակից հետո նա գտնում եր առանձնապես զգոն և աշալուրջ: Միտո ե, թե ինչպես Անինն այն ժամանակ համառորեն ներշնչում եր պատգամավորներին՝ «աաշին գործն ե՝ հաղթանակով չտարվել և չմեծամտանալ յերկրորդ գործն ե՝ ամրացնել ձեռք բերված հաղթանակը». յերրորդն ե՝ հակառակորդին ջախջախել մինչև վերջը, վորովհետեւ նա միտյն ջարդված ե, բայց բնավ ամրովջովին ջախջախված»: Նա կծու կերպով ծաղրում եր այն պատգամավորներին, վորոնք թիթեամտորեն հավատացնում եյին, թե «աւտուետես մենշեղմիկների բանց պրծած ե»: Նրա համար զդվար չեր ապացուցել վոր մենշեղմիկները դեռևս արմատներ ունեն բանվորական շարժման մեջ, վոր նրանց գեմ պետք ե ջնորհքով պայքարել, ամեն կերպ խուսափելով իր ուժերը գերազնահատակելուց և մանավոնդ հակառակորդի ուժերը թերազնահատելուց:

«Հաղթանակից չգոռողանալ»—այդ՝ Անինի բնավորության մեջ հենց այն առանձնահատկությունն ե, վորը նրան ոգնում եր զգաստորեն կըուելու հակառակորդի ուժերը և կուսակցությունն ապահովագրելու հնարավոր անակնկալիներից:

ԱԿԶԲՈՒՆՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցության առաջնորդները չեն կարող թանգ չհամարել իրենց կուսակցության մեծամասնության կարծիքը: Մեծամասնությունը մի ուժ ե, վորը չի կարող հաշվի չտանել առաջնորդը: Անինն այդ բանն ավելի վատ չեր հասկանում, քան

կուսակցության վորեն այլ առաջնորդ: Բայց Լենինը յերբեք չեր դառնում մեծամասնության գերին, մանավանդ յերբ այդ մեծամասնությունն իր տակ սկզբունքային հրմք չեր ունենում: Մեր կուսակցության պատմության մեջ մոմենտներ եյին լինում, յերբ մեծամասնության կարծիքը կամ կուսակցության բռակեյական շահերը կոնֆլիկտի եյին բռնվում պրոլետարիատի արժատական շահերի հետ: Այդպիսի գեղաքերում Լենինն առանց յերկար մտածելու, վճարականորեն բռնում եր սկզբունքայնության կողմը՝ ընդգեմ կուսակցության մեծամասնության: Ավելին, նա այդպիսի գեղաքերում չեր վախճնում տառացիորեն մենակ դուրս դալու ամենքի դեմ, հույսը դրած այն բանին,—ինչպես նա հաճախ առում եր այդ մասին,—վոր «սկզբունքային քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականությունն ե»:

Այդ տեսակետից հատկապես բնորոշ են հետևյալ յերկու փաստերը:

Առաջին փաս: 1909—1911 թ. թ. ժամանակաշրջանն եր, յերբ կուսակցությունը հականեղափոխության կողմից ջարդված, լիսակատար քայլայման մեջ եր: Դա կուսակցությանը չհավատալու ժամանակաշրջանն եր, կուսակցությունից վոչ միայն ինտելիգենցիաների, այլև մասամբ բանվորների համատարած փախուստի ժամանակաշրջանը, ընդհատակը ժխտելու ժամանակաշրջանը, լիկվիդատորության ու վիլուգման ժամանակաշրջանը: Այն ժամանակ վոչ միայն մենշևիկները, այլև բոլշևիկները մի ամբողջ շարք ֆրակցիաներ ու հոսանքներ եյին ներկայացնում, վորոնք մեծ մասամբ կտրված եյին բանվորական շարժումից: Հայտնի յե, վոր նենց այդ ժամանակաշրջանում ծագեց ընդհատակը լիովին լիկվիդացիայի յենթարկելու և բանվորներին լիդար, ստոլիպինյան լիբերալ կուսակցության²² մեջ կազմակերպելու գողափարը: Լենինն այն ժամանակ միակն եր, վոր չենթարկեց ընդհանուր ու իշխող տրամադրություններին ու ժողովական արքաները եր պահում կուսակցականության²³ դրոշը, զարմանալի համբերությամբ և չտեսնված համառությամբ հավաքելով կուսակցության բաժան-բաժան ու ջարդված ուժերը, կովելով բոլոր և ամեն տեսակի հակառակական հոսանքների դեմ բանվորական շարժման ներսում, աննախընթաց արիությամբ և չտեսնված հաստատակամությամբ պաշտպանելով կուսակցականությունը:

Հայտնի, յե, վոր կուսակցականության համար մզած այդ վեճում լենինը հետո հաղթող դուրս յեկավ:

Յերկրագր փաս: 1914—1917 թ.թ. ժամանակաշրջանն եր, իմպերիալիստական պատերազմի յետուն ժամանակաշրջանը, յերբ բոլոր կամ գրեթե բոլոր սոցիալ-դեմոկրատական և սոցալիստական կուսակցությունները, ընդհանուր հայրենասիրական մոլուցքին յենթարկվելով, ծառայագրվեցին հայրենի իմպերիալիզմին: Այդ այն ժամանակաշրջանն եր, իբր Ա ինտերնացիոնալը կապիտալի առջև խոնարհեցրեց իր գրուները, յերբ շովինիստական ալիքի առջև չգիմացան նույնիսկ անպիսի մարդիկ, ինչպես Պետականութիւն ե, Կառուցկին, Գեղը և ուրիշները: Լենինն այն ժամանակ միակն եր կամ գրեթե միակը, վոր վճռական պայքար հարուցեց սոցիալ-շովինիզմի և սոցիալ-պացիֆիզմի դեմ²⁴, մերկացնում եր Գեղեցի ու Կառուցկիների զավաճանությունը և խարանում եր Միջանկայա «հեղտափոխականների» կիսկատարությունը: Լենինը հասկանում եր, վոր ինքն իր հետևն ունի աննշան փոքրամասնություն, բայց այդ նրա համար վճռական նշանակություն չուներ, վորովհետեւ նա գիտեր, վոր միակ ճիշտ քաղաքականությունը և, վորովհետեւ նա գիտեր, վոր սկզբունքային քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականությունն ե:

Հայտնի յե, վոր նոր ինտերնացիոնալի համար մզված այդ վեճի մեջ ևս լենինը հաղթող դուրս յեկավ:

«Սկզբունքային քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականությունն ե»—սա նույն այն փորմուլն ե, վորի ողնությամբ լենինը գրուով վերցնում եր նոր «անառիկ» դիրքեր, հեղափոխական մարքսիզմի կողմը նվաճելով պրոլետարիատի լավագույն տարրերին:

ԱՎԱՏԱՔ ՄԱՍԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Կուսակցությունների թերեաթիկներն ու առաջնորդները, վորոնք գիտեն ժողովուրդների պատմությունը, սերտել են հեղափոխությունների պատմությունը սկզբից մինչև վերջ, յերբեմն բռնված են լինում մի անվայելուչ հիվանդությունով: Այդ հիվանդությունը կոչվում է վախ՝ մասսաներից, հավատի բացակայությունը գեպի մասսաների ստեղծագործ ընդունակությունները: Այդ հողի վրա յերբեմն առաջ և գալիս առաջնորդների մի տեսակ արիստոկրատիզմ մասսաների վերաբերմամբ, վորոնք հեղափոխությունների պատմությունն այնքան ել լավ չգիտեն, բայց

կոչված են ջախջախելու հինը և կառուցելու նորը՝ վախ, թե տարերքը կարող ե մոլեզնել, թե մասսաները կարող են շշտ ավելորդ բան ջախջախել, մասսաներին գրքույկներով սովորեցնել ջանացող, բայց մասսաներից բան սովորել չկամնցող դայակի դեր խսպալու ցանկություն,—ոյս ե այդ տեսակի արիստոկրատիզմի հիմքը:

Լենինն այդպիսի տաճնորդների լիակատար հակադրությունն եր Յես չեմ ճանաչում մի ուրիշ հեղափոխական, վորն այնպիս խորապես հավատար պրոլետարիատի ստեղծագործ ուժերին և նրա գասակարգային բնապղի հեղափոխական նորատակահարմարությանը, ինչպիս լենինը: Յես չեմ ճանաչում մի ուրիշ հեղափոխական, վորը կարողանար այնպիս անխնա խարազանել «հեղափոխության քառի» և «մասսաների ինքնազուխ» գործողությունների վակիանալիային ինքնազոն քննադատներին,—ինչպիս լենինը: Միտս ե, ինչպիս մի զրույցի ժամանակ, ի պատասխան ընկերներից մեկի նկատողությունը, թե «հեղափոխությունից հետո պետք ե նորմալ վարզ սահմանվի», լենինը սարկազմով նկատեց. «Վայ. ե, յեթե հեղափոխականի հավակնություն ունեցող մարդկի մոռանում են, վոր պատմության մեջ ամենից ավելի նորմալ կարգը հեղափոխության կարգն ե»:

Այստեղից ե լենինի արհամարհական վերաբերմունքը դեպի այն բոլոր մարդիկ, վորոնք աշխատում եյին բարձրից նայել մասսաներին և նրանց գրքույկներով սովորեցնել Այստեղից ե լենինի անդադրում քարոզը՝ սովորել մասսաներից, իմաստավորել նըանց գործողությունները, ջանադիր ուսումնասիրել մասսաների պայքարի պրակտիկ փորձը:

Հավատ մասսաների ստեղծագործ ուժերին—սա լենինի գործունեյության մեջ հենց այն տանձնահատկությունն ե, վորը նըանց հնարավորություն եր տալիս իմաստավորելու տարերքը և նրա շարժություղությունը պարզեց պրոլետարական հեղափոխության հունով:

ՀԵՊԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁԱՐԸ

Լենինը ծնված եր հեղափոխության համար: Նա իսկապես հեղափոխական պայքյունների հանճար և հեղափոխական դեկավարման մեծագույն վարպետ եր: Նա իրեն յերբեք այնպիս աղատ և ուրախ չեր զգում, ինչպիս հեղափոխական ցնցումների դարաշրջանում: Յես զրանով ընալ չեմ ուզում ասել, թե լենինը միանման քաջալերում եր ամեն մի հեղափոխական ցըն-

ցում կամ թե նա միշտ և ամեն պայմաններում հեղափոխական պայքյունների կողմանից եր: Ամենեին: Յես զրանով միայն առել եմ ուզում, թե լենինի հանճարեղ խորաթափանցությունն այնպիս լրիվ ու մեկին չեր զրսերպվում, ինչպիս հեղափոխական պայքյունների ժամանակ: Հեղափոխական շրջադարձերի ժամանակնա տառացիություն վիթթում եր, զանոնում եր հստակատես, նախագուշակում եր գասակարգերի շարժումը և հեղափոխության հավանական զիգզազները, զրանք վոնց վոր ձեռքի տիկի մեջ տեսնելով: Իզուր չե, վոր մեր կուսակցական շրջաններում ասվում ե, թե «իշխը հեղափոխության ալիքների մեջ կարողանում է այնպիս լուս ինչպիս ձուկը ջրում»:

Այստեղից ել լենինի տակտիկական լոգունգների «ոպշեցուցիչ» պարզությունը և հեղափոխական մտահղացումների «գլխապաւլույթ» համարձակությունը:

Միտս են գալիս յերկու առանձնապես բնորոշ վաստեր, վորոնք նշում են լենինի այդ առանձնահատկությունը:

Առաջին փաս: Հոկտեմբերյան հեղաշրջաւմից առաջ յեղած ժամանակաշրջանն եր, յերբ միլիոնավոր բանվորներ, գյուղացիներ ու զինվորներ թիկունքի և ուզմածակատի ճգնաժամից գործած հաշտություն և ազատություն եյին պահանջում: յերբ գեներալիստերը ու բուրժուազիան զինվորական դիկտատուրա եյին նախապատրաստում «պատերազմ մինչև վախճան»-ի ոգտին, յերբ ամբողջ այսպիս կոչված հեասարակական կարծիքը, բոլոր այսպիս կոչված «սոցիալիստական կուսակցությունները» բոլշևիկների գեմ եյին կանգնած, արհամարհանքով նըանց «գերմանական լրտեսները» անվանելով, յերբ կերենսկին փորձում եր ընդհատակ քշել—և մասամբ արդեն կարողացավ քշել—բոլշևիկների կուսակցությունը: յերբ ավատրութերմանական կուլիցիայի 26 տոկավին հզոր կարգապահ բանակները կանգնած եյին մեր հոգնած և քայքայվող բանակների գեմ, իսկ արևմտայելշրուպական «սոցիալիստաները» բարեհաջող կերպով բլոկի մեջ եյին գտնվում իրենց կառավարությունների հետ հոգուտ պերագմի մինչև լիսկատար հաղթանակ»:

Ի՞նչ եր նշանակում ապստամբություն հարուցել այդպիսի մոմինտում: Ապստամբություն բարձրացնել այգպիսի պարագայում՝ նշանակում և ամեն ինչ կարտի վրա գնել Բայց լենինը ոխալ անելուց չեր վախենում, վերովհետեւ զիսեր, իր պարզատես հայացքով տեսնում եր, վոր ապստամբությունն անխուսափելի յե, վոր ապստամբությունը կհաղթանակի, վոր ապստամբությունը

Թուսաստանում՝ կնախապատրաստի իմպերիալիստական պատերազմի վերջը, վոր ապստամբությունը Ռուսաստանում՝ կալեկոծի Արևմտաքի բազմատանջ մասսաները, վոր ապստամբությունը Ռուսաստանում՝ իմպերիալիստական պատերազմը կվերածի քաղաքացիական պատերազմի, վոր ապստամբությունը կտա Խորհուրդների հանրապետություն, վոր Խորհուրդների հանրապետությունը ամբողջ աշխարհում հեղափոխական շարժման պատվար կժառացի:

Հայտնի յե, վոր Լենինի այդ հեղափոխական կանխառեսում հետագայում կատարվեց չտեսնված ճշտությամբ:

Յերկրորդ փաստ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո առաջին որերն եյին, յերբ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը գոյացում եր խոռվարար գեներալին, գլխավոր հրամանատար Դուխոնինին հարկադրել, վոր դադարեցնի ուղղմական գործողությունները և զինադադարի մասին բանակցությունները սկսի գերմանացիների հետ: Միտս ե, ինչպես Լենինը, Կոիլենկոն (ապա գա զլիավոր հրամանատարը) և յետ մեկնեցինք Գլխավոր շտաբը Պիտերում, հեռախոսի մոտ՝ Դուխոնինի հետ բանակցելու: Սարսեցուիչ բոպե յեր: Դուխոնինը և կայանը կատեզորիկ կերպով հրամարվեցին Ժողկոմիսորին հրամանը կատարելուց: Բանակի հրամանատարական կազմն ամբողջությամբ կայանի ձեռքին եր: Ինչ վերաբերում ե զինվորներին, ապա անհայտ եր, թե ինչ կասի 12-մրկոնանոց բանակը, վոր յենթարկված եր այսպես կոչված բանակային կազմակերպություններին ²⁶, վորոնք Խորհրդայինիշխանության դեմ եյին տրամադրված: Պիտերի մեջ հենց ինչպես հայտնի յե, այն ժամանակ հասունանում եր յունկերների ապօստամբությունը: Բացի այդ, կերենսկին պատերազմի յեր գնում Պիտերի վրա: Միտս ե, թե ինչպես հեռախոսի մոտ վորոշ լուսաթյունից հետո Լենինի գեմքը ինչ-վոր անսովոր լույսով փայլեց: Նկատելի յեր, վոր նա արդին փորոշում ե ընդունել «Գնանք ռադիոկայան», — ասաց Լենինը, — նա մեզ ոգուտ կտա. մենք հատուկ հրամանով պաշտոնանկ կանենք զեներալ Դուխոնինին, նրա տեղը զլիավոր հրամանատար կնշանակենք ընկ. Կոիլենկոյին և հրամանատարական կազմի զլիի վրայով զինվորներին կդիմենք մի կոչով՝ շրջապատել զեներալներին, դադարեցնել ուղղմական գործողությունները, կապվել ավստրո-գերմանական զինվորների հետ և հաշտության գործը վերցնել իրենց սեփական ձեռքը» ²⁷:

Դա մի «թոիչք եր դեպի անհայտությունը»: Բայց Լենինը չեր վախենում այդ «թոիչքից», ընդհակառակը, զրան ընդպառաջ եր գնում, վորովինետն գիտեր, վոր բանակը հաշտություն և ցանկանում, և նա կնվաճի հաշտությունը, հաշտության ճանապարհոց սրբելով բոլոր և ամեն տեսակի խոչընդունելը, վորովինետն ամ գիտեր, վոր հաշտություն հաստատելու այդպիսի յեղանակը զուր չի անցնի ավստրո-գերմանական զինվորների համար, վոր դա առանց բացառություն բոլոր սազմաճակատներում աղատություն կտա հաշտության ձգտմանը:

Հայտնի յե, վոր Լենինի այդ հեղափոխական կանխառեսությունը ևս հետագայում կատարվեց ամենայն ճշտությամբ:

Հանճարեղ խորաթափանցություն, վերահաս դեպքերի ներքեն իմաստն արագորեն ըմբռնելու և գուշակելու ընդունակություն— այդ՝ Լենինի հենց այն հատկությունն ե, վորը հեղափոխական շրջադարձերում նրան ոգնում եր նշելու ճիշտ ստրաեդիտ հստակ վարքագիծ:

ԱՄԵՐԻԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱԹԵԱԴԻՆ ՊԵՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՌԻՆԵՑԱԾ ԶՐՈՒՅՑԻՑ

1927 թ. սեպտեմբերի 9

1. ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՅԵՎ. ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՊԱՏՍՍԱԽԱՆՆԵՐԸ

1-ին հարց: Լենինը ու կոմիուսակցությունը գործնականութեան մարքսիզմին ի՞նչպիսի նոր սկզբունքներ են ավելացրել: Ճի՞՞ս կինեւ արդյօք, յերեւ ասելինք, թե Լենինը հավատում եր «ասեղծագործ հեղափոխությանը», այնինչ Մարքսի ավելի հակամետ եր տեսեական ուժեցի կուլմիթացիան զարգացման սպասելու:

Պատասխան: Ցես կարծում եմ, որ Լենինը վոչ մի «նոր սկզբունք» չի «ավելացրել» մարքսիզմին, ինչպես և Լենինը մարքսիզմի «հին» սկզբունքներից վոչ մեկը չի վերացրել: Լենինը յեղել և և մուռ և Մարքսի ու Ենգելսի ամենահավատարիմ ու հնատեղական աշակերտը, զորն ամբողջությամբ ու լիովին հենվում և մարքսիզմի սկզբունքներին: Բայց Լենինը Մարքսի—Ենգելսի ուսմունքի լոկ միայն կատարողը չի յեղել նա միաժամանակ Մարքսի ու Ենգելսի ուսմունքը շարունակողն եր: Այդ ի՞նչ և նշանակում: Այդ նշանակում ե, զոր նա Մարքսի—Ենգելսի ուսմունքը շարունակեց զարգացնել՝ համապատասխան զարգացման նոր պայմաններին, համապատասխան կապիտալիզմի նոր փուլին, համապատասխան իմպերիալիզմին: Այդ նշանակում ե, զոր, շարունակելով զարգացնել Մարքսի ուսմունքը դասակարգային պայքարի նոր պայմաններում, Լենինը մարքսիզմի ընդհանուր գանձարանն ե մատցրել մի ինչ զոր նոր բան՝ համեմատած Մարքսի ու Ենգելսի տվածի հետ, համեմատած այն բանի հետ, ինչ կարող եր արվել մինչ-իմպերիալիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում, ընդլայրում այդ նորը, զոր Լենինն և մատցրել մարքսիզմի գանձարանը, ամբողջովին ու լիովին հիմնվում ե Մարքսի ու Ենգելսի տված սկզբունքների վրա: Այդ իմաստով

ել մեզ մոտ խոսվում ե լենինիզմի մասին, իբրև իմպերիալիզմի և պրոլետարական հեղափախությունների դարաշրջանի մարքսիզմի մասին: Անա միքանի հարց, զորոնց բնագավառում Լենինը տվել և մի ինչ-զոր նոր բան, շարունակելով զարգացնել Մարքսի ուսմունքը:

Նախ՝ մոնոպոլիստական կապիտալիզմի հարցը, իմպերիալիզմի՝ իբրև կապիտալիզմի նոր փուլի հարցը: Մարքսն ու Ենգելսը ու «Կապիտալում»²⁸ տվել են կապիտալիզմի հիմունքների վերլուծությունը: Բայց Մարքսն ու Ենգելսն ապրել են մինչ-մոնոպոլիստական կապիտալիզմի տիրապետության ժամանակաշրջանում, կապիտալիզմի սահուն եվոլյուցիա կատարելու և ամբողջ յերկրագնդի վրա «խաղաղ կերպով» տարածվելու ժամանակաշրջանում: Այդ հին փուլը վերջացավ XIX դարի վերջին և XX դարի սկզբին, յերբ Մարքսն ու Ենգելսն արդեն կենդանի չեցին: Հատկանակի յե, զոր Մարքսն ու Ենգելսը կատարել միայն կարող եյին կապիտալիզմի զարգացման այն նոր պայմանները, զորոնք տուաջացել եյին հին փուլին փոխարինելու յեկած նոր կապիտալիստական փուլի կապակցությամբ, զարգացման իմպերիալիստական, մոնոպոլիստական փուլի կապակցությամբ, յերբ կապիտալիզմի սահուն եվոլյուցիա կատարելու փոխարինվեց կապիտալիզմի թոխքածն, կատառատրոֆիկ զարգացումով, յերբ կապիտալիզմի զարգուցման անհամաչափությունը և հակասությունները հանդիս յեկան առանձին ուժով, յերբ վաճառահանման և կապիտալի արտահանության շուկաների համար մղված պայքարը զարգացման ծայրահեղ անհամաչափության պայմաններում անխուսափելի դարձեց աշխարհի և ազգեցության ըրջանների պարբերական վերաբաժանումների նպատակով մղվող պարբերական իմպերիալիստական պատերազմերը: Լենինի յերախտիքը և, ուրիշն, Լենինի կողմէց նորն այսուղ այն ե, զոր նա հենքիլով «Կապիտալի» հիմնական զրույթների վրա, տվեց իմպերիալիզմի՝ իբրև կապիտալիզմի վերջին փուլի՝ հիմնավորված մարքսիստական վերլուծությունը, բանալով նրա խոցերը և պարզելով նրա անխուսափելի կործանման պայմանները: Այդ վերլուծության հիման վրա ստեղծվեց Լենինի հայտնի զրույթն այն մասին, թե իմպերիալիզմի պայմաններում հնարավոր և սոցիալիզմի հաղթանակն առանձին վերցրած, կապիտալիստական յերկիրներում:

Եթերկորդ՝ պրոլետարիատի դիկտատուրայի հարցը: Պրոլետարիատի դիկտատուրայի իբրև պրոլետարիատի քաղաքական տիրապետության և իբրև կապիտալի իշխանությունը բռնու-

թյան միջոցով տապալելու մեթոդի՝ հիմնական գաղափարը Մարքսը ուն ու Ենգելսն են տվեր Այդ բնագավառում կենինի տված նորն այն ե, վոր՝ ա) նա հայտնագործեց խորհրդային էշխանությունն իրը պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև, զրա համար ովտագործելով Փարիզի Կոմունայի²⁹ և ուսւական հեղափոխության փորձը. բ) պրոլետարիատի դիկտատուրայի Փորմուլի մեջ նա բացեց փակադերը պրոլետարիատի դիկտատուրան դաշնակիցների պրոբլեմի ահսանկյունով, պրոլետարիատի դիկտատուրան սահմանելով իրը զեկավար հանդիսացող պրոլետարիատի և զեկավարվող հանդիսացող վոչ-պրոլետարական դասակարգելով (զյուղացիության և այլն) շահագործվող մտասաների դասակարգային դաշինքի մի հատուկ ձև. գ) առանձին ուժով նա ընդգծեց այն փաստը, վոր պրոլետարիատի դիկտատուրան զեմոկրատիայի բարձրագույն ափան և դասակարգային հասարակության որով, պրոլետարիատի զեմոկրատիայի ձևն ե, վորն արտահայտում և մեծամասնության (շահագործվողների) շահերը, — իրը հակաշշիության կամակարգի հական արտահայտում և փոքրամասնության (շահագործողների) շահերը:

Ենը պրոդակտության գիտատուրայի ժամանակաշրջանում, կապիտալիզմի սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում կապիտալիստական պետություններով շրջապատված մի յերկրում սոցիալիզմը հաջող շինարարության ձևերի ու յեղանակների հարցը: Մարքսն ու Ենգելսը պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանը դիտում եյին իրը քիչ թե շատ տեսական, հեղափոխական դուեմարտերով և քաղաքացիական պատերազմներով լի մի ժամանակաշրջան, վորի ընթացքում պրոլետարիատը, իշխանության գլուխ կանգնած լինելով տնտեսական, քաղաքական, կուլտուրական և կազմակերպական ընույթի միջոցներ և ձեռնարկում, վորոնք անհրաժեշտ են հին կապիտալիստական հասարակության տեղ նոր սոցիալիստական հասարակություն, անդասակարգ հասարակություն, առանց պետության հասարակություն ստեղծելու համար: Լենինն ամբողջությամբ ու լիովին կանգնած եր Մարքսի ու Ենգելսի այդ հիմնական գրութեների հողի վրա: Այդ բնագավառում կենինի տված նորն այն ե, վոր՝ ա) նա հիմնավորեց իմպերիալիստական պետություններով շրջապատված՝ պրոլետարիատի դիկտատուրայի յերկը ըում լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորությունը, պայմանով, վոր այդ յերկիրը շնչահեղձ չինի շրջապատող կապիտալիստական պետությունների ուսկմական

ինտերվենցիայի զնորհիվ. բ) նա նշեց տնտեսական քաղաքականության այն կոնկրետ ուղիները («նոր տնտեսական քաղաքականություն»), վորոնց ոգուությամբ պրոլետարիատը, ձեռքին ունենալով տնտեսական իշխող բարձունքները (արդյունաբերություն, հող, տրանսպորտ, բանկեր և այլն), սոցիալիստական դարձրած ինքրուստրիան գողում և գյուղատնտեսության հետ («ին դուստրիայի զողում գյուղացիական տնտեսության հետ») և այդպիսով ամբողջ ժաղավրդական տնտեսությունը տանում և գեղ պիտիալիզմ. գ) նա նշեց մանը գյուղացիական տնտեսությունը վերաշինելու և գյուղացիության հիմնական մասսաները սոցիալիզմի վողով վերադասարակելու գործում պրոլետարական դիկտատուրայի ձեռքին մեծագույն սիջոց հանդիսացող կոռպերացիայի միջոցով զյուղացիության հիմնական մասսաները հետ արգիշտեան մուեցնելու և սոցիալիստական շինարարության հունը ներգրավելու կոնկրետ ուղիները:

Զորբորդ՝ հեղափոխության մեջ, յուրաքանչյուր ժողովրդական հեղափոխության մեջ, ինչպես ցարիզմի դեմ ուղղված հեղափոխության, այնպես ել կապիտալիզմի դեմ ուղղված հեղափոխության մեջ պրոլետարիատի հեղեմոնիայի հարցը: Մարքսն ու Ենգելսը տվել են պրոլետարիատի հեղեմոնիայի դաշտարի հիմնական ուրվագծերը: Այստեղ կենինի տված նորն այն ե, վոր նա այդ ուրվագծերը շարունակեց զարգացնել և ծավալելով դարձրեց պրոլետարիատի հեղեմոնիայի մի կառուցիկ սխտեմ, վահ միջոցն ցարիզմն ու կապիտալիզմը տապալելու գործում, այլև պրոլետարիատի դիկտատուրայի որով սոցիալիստական շինարարության գործում քաղաքի ու գյուղի աշխատավոր մասսաներին պրոլետարիատի կողմից զեկավարություն ցույց տարու մի կառուցիկ սխտեմ: Հայտնի յե, վոր պրոլետարիատի հեղեմոնիայի գաղափարը, շնորհիլ կենինի և նրա կուսակցության, վարպետորեն կիրառվեց Ռուսաստանում: Դրանով և ի միջի այլոց բացարկվում այն փաստը, վոր Ռուսաստանում հեղափոխության շնորհիլ հաստատվեց պրոլետարիատի իշխանությունը: Առաջ բանը սովորաբար այնպես եր կատարվում, վոր հեղափոխության ժամանակ բանվորներն եյին կովում բարձրկտղների վրա, նրանք եյին արյուն թափում, նրանք եյին հինը տապալում, իսկ իշխանությունն ընկնում եր բուրժուաների ձեռքը, վորոնք հետո ճնշում ու շահագործում եյին բանվորներին: Այսպես եր Անգլիայում ու Ֆրանսիայում: Այսպես եր Դերմանիայում: Մեզնում, Ռուսաստանում, բանն ուրիշ ընթացք ստացավ: Մեզնում բանվորները

հեղափոխության հարվածային ուժը չելքն մէայն, կինելով հեղափոխության հարվածային ուժը՝ ուստահան պրոլետարիատն աշխատում եր միաժամանակ լինել քաղաքի ու գյուղի բոլոր շահագործող մասսաների հեգեմոնը, քաղաքական դեկաֆարը, նրանց համախմբելով իր ջուրջը, նրանց կտրելով բուրժուազիայից, բուրժուազիային քաղաքականապես մեկտւացնելով։ Իսկ լինելով շահագործող մասսաների հեգեմոնը, ուստահան պրոլետարիատն ամբողջ ժամանակ պայքարում եր, վորպեսզի իր ձեռքը գրավի իշխանությունը և այն գործադրի իր սեփական ուժին, բուրժուազիայի գեմ, կապիտալիզմի դեմ։ Դրանով և հենց բացարձում, վոր Ռուսաստանում հեղափոխության յուրաքանչյուր հզոր յելույթ, ինչպես 1905 թ. հոկտեմբերին, այնպես ևլ 1917 թ. փետըրվարին, բեմ եր համառ բանվորական պատգամավորների խորհուրդներն իրեն իշխանության նոր ապարատի սաղմեր, վորը կոչված և ճնշելու բուրժուազիային, —ի հակակշիռ բուրժուական պառամենտի՝ իրեն իշխանության հին ապարատի, վորը կոչված և ճնշելու պրոլետարիատին։ Մերնում բուրժուազիան յերկու անգամ փորձել ե վերականգնել բուրժուական պառամենտը և վերջ դնել խորհուրդներին, — 1917 թ. ոգոստոսին, «Նախապարամենտի»³⁰ ժամանակ, նախքան բոլշևիկների կողմից իշխանությունը գրավելը, և 1918 թ. հունվարին, «Ասհմանադիր ժողովի» ժամանակ, պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելուց հետո, — և յուրաքանչյուր անգամ պարտություն և կրել։ Ինչեւ, Վորովինենք բուրժուազիան քաղաքականապես արդեն մեկուսացված եր, աշխատավորների միլիոնավոր մասսաները պրոլետարիատին համարում եյին հեղափոխության միակ առաջնորդը, իսկ խորհուրդները մասսաների կողմից արդեն ստուգվել ու փոնզել եյին, իրեն իշխանությունը վորը բուրժուական պառամենտով փոխարինելը պրոլետարիատի համար ինքնասպանություն կլիներ։ Ուստի զարմանալի չե, վոր բուրժուական պառամենտարիզմը մեղնում չպատվաստվեց։ Ահա թե ինչու Ռուսաստանում հեղափոխության շնորհիվ պրոլետարիատի իշխանություն հաստատվեց։ Մրանք են հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի լենինյան սիստեմը կենսագործելու արդյունքները։

Հինգերորդ՝ պղպային գուղութային հարցը։ Մարքոն ու ննդելսն իր ժամանակին վերլուծելով իոլանդիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Կենտրոնական Յեվրոպայի յերկիրների, Ահաստանի, Հունգարիայի դեպքերը, — պղպային գաղութային հարցը

վերաբերյալ տվել են հիմնական, յելակետային գաղափարները։ Լենինն իր աշխատություններում այդ գաղափարների վրա յեր հիմնվում։ Այդ բնագավառում Լենինի կողմից տրված նորն այն ե, վոր՝ ա) նա այդ գաղափարներն ի մի հավաեց և իմպերիալիզմի դարաշրջանում տեղի ունեցող ազգային-գաղութային հեղափոխությունների վերաբերյալ հայացքների մի կառուցիկ սիստեմ գարձեց. բ) ազգային-գաղութային հարցը կապեց իմպերիալիզմի տապալման հարցի հետ. գ) ազգային-գաղութային հարցը հայաբարեց միջազգային պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի բաղկացուցիչ մի մասը։

Վերջապես, պրոլետարիատի կուսակցության հարցը։ Մարքոն ու ննդելսն տվել են կուսակցության՝ իրեն պրոլետարիատի առաջավոր ջակատի՝ հիմնական ուրվագծերը, առանց վորի (կուսակցության) պրոլետարիատը չի կարող ձեռք բերել իր ազատությունը՝ վոր իշխանությունը վերցնելու իմաստով, վոր ել կապիտալիստական հասարակությունը վերակառուցելու իմաստով։ Այդ բնագավառում Լենինի տված նորն այն ե, վոր նա այդ ուրվագծերը շարունակեց զարգացնել՝ համապատասխան իմպերիալիզմի ժամանակաշրջանում պրոլետարիատի մղած պայքարի նոր պայմաններին, ցույց տալով, վոր ա) կուսակցությունը պրոլետարիատի դաստիարակությին կազմակերպության բարձրագույն ձևն ե՝ համեմատած պրոլետարիատի կազմակերպության ուրիշ ձևերը հետ (արհմիություններ, կոոպերացիա, պետական կազմակերպություն), վորոնց աշխատոնքը նա կոչված և ընդհանրացնելու և ուղղություն տալու. բ) պրոլետարիատի զիկտատուրան կարող և իրականացնել միմիայն կուսակցության՝ իրեն նրան ուղղություն տվող ուժի՝ միջոցով. գ) պրոլետարիատի դիկտուրան լինել կարող և միմիայն այն գելքում, յեթե նրան զեկավարում և մի կուսակցություն, կոմունիստաների կուսակցությունը, վորը զեկավարությանը մասնակից չի դարձնում և չպետք և գարձնի ուրիշ կուսակցությունների. դ) ասանց յերկաթի գիսցիպինայի կուսակցության մեջ չեն կարող իրականացնել ուրուկտարիատի զիկտատուրայի խնդիրները՝ շահագործողներին ճնշելու և դասակարգային հասարակությունը սոցիալիստական հասարակության վերակառուցելու վերաբերյալ։

Ահա հիմնականում այն նորը, ինչ իր աշխատություններում տվել ե լենինը, կոնկրետացնելով և շարունակելով զարգացնել Մարքոն ուսմունքը՝ համապատասխան իմպերիալիզմի ժամանակաշրջանում պրոլետարիատի մղած պայքարի նոր պայմաններին։

Այդ պատճառով ել մեզնում ասում են, թե լենինիզմն իմացիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի մարքսիզմն են:

Դրանից պարզ ե, վոր լենինիզմը չի կարելի վնչ կտրել մարքսիզմից և վնչ մանավանդ հակադրել մարքսիզմին:

Պատվիրակության հարցի մեջ հետո ասված ե, «Ճիշտ կլիներ արդյոք, յեթե ասելինք, թե լենինը հավատում եր «ստեղծագործ հեղափոխությանը», այնինչ Մարքսն ավելի հակամետ եր տնտեսական ուժերի կուլմինացիոն զարգացմանն սպասելու»: Յես կարծում եմ, վոր այդպիս ասելը բոլորվին սիալ կլիներ: Յես կարծում եմ, վոր յուրաքանչյուր ժողովրդական հեղափոխություն, յեթե իրոք ժողովրդական հեղափոխություն ե այն, — ստեղծագործ հեղափոխություն ե, վորովհետև փշում ե հին կենսաձեւը և ստեղծագործում, ստեղծում ե նորը: Ինարկի, վոչ մի ստեղծագործ բան չի կարող լինել այնպիսի, թող թուրլատրվի ասել, «հեղափոխությունների» մեջ, վորպիսիք յերբեմն լինում են, ասենք, Ալբանիայում³¹, իբրև ցեղերից վուսանց տիկնիկային ռապստամբություններա ուրիշ ցեղերի դեմ: Բայց մարքսիստները նման տիկնիկային «ապստամբությունները» յերբեք չեն համարել հեղափոխություն: Ակներեւ ե՝ խոսքն այդպիսի «ապստամբությունների» մասին չե, այլ մասսայական ժողովրդական հեղափոխության, վորը ձնշված դասակարգերին ծառացնում ե ձնշող դասակարգերի դեմ: Իսկ այդպիսի հեղափոխությունը չի կարող ստեղծագործ չկլնել: Մարքսն ու Լենինը հենց այդպիսի, և միմիայն այդպիսի հեղափոխության կողմնակից հյին: Ընդսմին հասկանալի յե, վոր այդպիսի հեղափոխությունը չի կարող ծագել ամեն մի պայմանում, վոր նա կարող է առաջ գալ տնտեսական ու քաղաքական կարգի վորոշ քարենպատայացմաններում միայն:

ՀԱՏՎԱԺՆԵՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՐՈՂ ԵՄԻ, ԼՈՒԳՎԻԴԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԶՐՈՒՅՑԻՑ

1931 թ. դեկտեմբերի 15

Լուդվիգ: Յես Զեղ չափազանց յերախտապարտ եմ նրա համար, վոր Դուք հնարավոր գտաք ինձ ընդունել: Քսան տարուց ավելի ժամանակի ընթացքում յես ուսումնասուրում եմ ականավոր պատմական անձնավորությունների կյանքն ու գործունեյությունը: Ինձ թվում ե, վոր յես մարդկանց լավ եմ հասկանում, բայց դրա փոխարեն վոչինչ չեմ հասկանում սոցիալ-տնտեսական պայմաններից:

Ստալին: Դուք համեստություն եք անում:

Լուդվիգ: Վոչ, այդ իսկապես այդպես ե: Յեկ հենց այդ պատճառով յես հարցեր կամ, վորոնք Զեղ զուցե տարօրինակ կթվան: Այսոր այսոեղ, կրեմլում, յես տեսա Պյոտր Մեծի միքանի եւխարները, և առաջին հարցը, վոր յես ցանկանում եմ Զեղ տար, հետեւյալն ե. Դուք Զեր և Պյոտր Մեծի միջև զուգահեռ հնարքագիր եք համարում: Դուք Զեղ համարում եք Պյոտր Մեծի դործի շարունակող:

Ստալին: Վոչ մի կերպ: Պատմական զուգահեռները միշտ ել վտանգավոր են: Տվյալ զուգահեռն անշմաստ ե:

Լուդվիգ: Բայց չե վոր Պյոտր Մեծը շատ շատ քան արեց իր յերկը զարգացման համար, այն բանի համար, վոր արևմտյան կուլտուրան փոխադրի մուսատան:

Ստալին: Այո, ինարկի, Պյոտր Մեծը շատ բան արեց կալվածատերերի դասակարգը բարձրացնելու և ծնունդ առնող վաճառականական գասակարգը զարգացնելու համար: Պյոտրը չափանց շատ բան արեց կալվածատերերի և առետրականների աղքային պիտությունն ստեղծելու և ամբացնելու համար: Պյոտր և ասել նույնպես, վոր կալվածատերերի դասակարգը բարձրացնեալ, առետրականների ծնունդ առնող դասակարգին ոժանդակելը և արդ դասակարգերի ազգային պետությունն ամրացնելը կա-

ատրվում եր ճորտ գյուղացիության հաշվին, վորից յերեքտակ կաշի եյին մաշկում: Ինչ ինձ ե վերաբերում, ապա յես միմիայն լենինի աշակերտն եմ և իմ նպատակն են լինել նրա արժանաւ զոր աշակերտը: Այս խնդիրը, վորին յես նվիրում եմ իմ կյանքը, մի ուրիշ դասակարգ բարձրացնելն ե, այն է՝ բանվոր դասակարգը: Սյու ինդիրը վնչ թե մի վորեն ազգային պետություն ամբացնելն ե, այլ սոցիալիստական, ուրիմն և ինտերնացիոնալ պետություն ամբացնելն ե, ընդուրում այդ պետության ամեն մի ամբացում նպաստում ե ամբողջ միջազգային բանվոր դասակարգն ամբացնելուն: Յեթե բանվոր դասակարգը բարձրացնելու և այդ դասակարգի սոցիալիստական պետությունն ամբացնելու համար իմ տարած աշխատանքի մեջ յուրաքանչյուր քայլ ուղղված չլիներ այն բանին, վոր ամբացվի և բարելավվի բանվոր դասակարգի զրությունը, ապա յես իմ կյանքն աննպատակ կհամարելի:

Տեսնում եք, վոր Զեր զուգահեռը հարմար չի գտիր:

Ինչ վերաբերում ե լենինին և Պյոտր Մեծին, ապա վերջինս մի կաթիլ եր նովի մեջ, իսկ լենինը՝ ամբողջ ովկիանոս:

Լուդվիգ: Մարքոփոլը ժխտում ե անձնավորության աչքի ընկնող զերը պատմության մեջ: Դուք արդյոք հակասություն չեք տեսնում պատմության մատերիալիստական ըմբռնման և այն բանի մեջ, վոր Դուք այնուամենայնիվ ընդունում եք պատմական անձնավորությունների աչքի ընկնող զերը:

Ստալին: Վոչ, այստեղ հակասություն չկա: Մարքոփոլը ընավ չի ժխտում աչքի ընկնող անձնավորությունների զերը կամ այն, վոր մարդիկ են անում պատմությունը: Մարքոլի մոտ, նրա «Փիլիսոփայության աղքատության»³² մեջ և ուրիշ յերկերում Դուք կարող եք կարդալ այն մասին, վոր ենից սարդիկ են, վոր անում են պատմությունը: Բայց, ինարկե, մարդիկ պատմություն անում են վոչ այնպես, ինչպես նրանց թելազրում ե մի ինչ վոր յերեակայություն, վոչ այնպես, ինչպես խելքներին կփչի: Յուրաքանչյուր նոր սերունդ հանդիպում ե վորոշ պայմանների, վորոնք արդեն պատրաստի կան այն մոմենտին, յերբ այդ սերունդը հանդիս է զալիս: Յեզ մեծ մարդիկ մի բան արժեն միմիայն այն չափով, վորչափով վոր կարողանում են ճիշտ հասկանալ այդ պայմանները, հասկանալ, թե ինչպես պետք է փոփոխ դրանք, Յեթե նրանք այդ պայմանները չեն հսկանում և ցանկանում են այդ պայմանները փոփոխել այնպես, ինչպես իրենց յերեակայությունն ե թելազրում, ապա նրանք, այդ մար-

գիկ, Դոն-Քիշոտի³³ գրության մեջ են ընկնում: Այսպիսով, հենց ըստ Մարքոլի, ընավ հորկ չկա մարդկանց հսկադրելու պայմաններին: Պատմությունը հենց մարդիկ են անում, բայց վորչափով վոր նրանք ճիշտ են հասկանում այն պայմանները, վոր իրենք գտնել են պատրաստի, և վորչափով միայն նրանք հասկանում են, թե ինչպես կարելի յէ փոփոխել այդ պայմանները: Դոնի այսպիս ենք հասկանում Մարքոլին մենք, ուստի բոլշևիկները: Իսկ մի տասնյակ տարի չե միայն, վոր մենք Մարքոլին ուստմանաբրում ենք:

Լուդվիգ: Մի յերեսուն տարի տուաշ, յերբ յես սովորում եյի համարանական բաղմաթիվ պրոֆեսորներ, վորոնք իրենց համարում եյին պատմության մատերիալիստական ըմբռնման կողմանակից, մեզ ներշնչում եյին, թե մարքուիզը ժխտում ե հերոսների զերը, հերոսական անձնավորությունների զերը պատմության մեջ:

Ստալին: Դրանք մարքուիզը գոեհկացնողներն եյին: Մարքուիզը յերբեք չի ժխտել հերոսների զերը: Ընդհակառակը, նա այդ դերը խոչըն և համարում, սակայն այն վերապահումիերով, վորոնց մասին յես հենց այժմ խոսում եյի:

... Լուդվիգ: Լենինը յերկար տարիներ անցրել և արտասահմանում, տարապետության մեջ: Ձեզ վիճակիվել և արտասահմանում լինել շատ կարճ ժամանակ: Դուք այդ համարում եք արդյոք Զեր պակասությունը, ընդուննելու եք արդյոք, թե հեղափոխության համար ավելի շատ ոգուտ են բերել նրանք, ովքեր լինելով արտասահման տարապետության մեջ՝ հնաժրավորություննեն ունեցել Յեվրոպան ընդհանուր ուսումնականություն, բայց դրա փոխարեն կտրվել են ժողովրդի հետ անմիջական կոնտակտ ունենալուց, —թե՛ հեղափոխականներից նրանք, ովքեր աշխատել են այսուհեղ, ճանաչել են ժողովրդի արամադրությունը, բայց դրա փոխարեն քիչ են ճանաչել Յեվրոպան:

Ստալին: Լենինին այդ համեմատությունից պետք ե հանել Ռուսաստանում մացածներից շատ քչերն այնպես սերտ կապված են յեղել ուսուական իրականության հետ, բանվորական շարժման հետ յերկրի ներում, ինչպես լենինը, թեպետ և նա յերկար ժամանակ արտասահմանում եր գտնվում: Միշտ, յերբ յես նրա մոտ արտասահման եյի գնում—1907, 1908, 1912 թ.թ., յես նրա մոտ տեսնում եյի Ռուսաստանից՝ պրակարիկներից յեկածնամակների կույտեր, և միշտ ել լենինն ավելի դիտեր, քան

Թուստատնում մնացածները: Նա արտասահմանում իր գոտնվելը
միշտ ել իր համար բեռ եր համարում:

Մեր կուսակցության և նրա զեկավարության մեջ, ինարկի,
անհամեմատ ավելի շատ են այն ընկերները, վորոնք մուսաս-
տանում են մնացել, վորոնք արտասահման չեն գնացել, քան նախ-
կին եմիգրանտները, և նրանք, ինարկի, հնարավորություն են
ունեցել հեղափոխության համար ավելի շատ ռգուտ բերելու,
քան տրաստահմանում գտնված եմիգրանտները: Չե՞ վոր մեզնում
կուսակցության մեջ քիչ եմիգրանտներ են մնացել: Կուսակցության
2 միլիոն անդամից նրանք կլինեն 100—200: Կե-ի 70 անդամից
հազիվ 3—4 հոգուց ավելին ապրած լինի տարագրության մեջ:

Ինչ վերաբերում է Յեվրոպային ծանոթ լինելուն, Յեվրո-
պան ուսումնառիրելուն, ապա, ինարկի, նրանք, ովքեր ցանկացել
են Յեվրոպան ուսումնառիրել այդ անելու ավելի հնարավորու-
թյուններ ունեցել են Յեվրոպայում գտնվելով: Յեվ այդ իմաս-
տով մեզնից նրանք, ովքեր յերկար չեն ապրել արտասահմանում,
մի բան կորցրել են: Բայց արտասահմանում գտնվելը ընալ
վճռական նշանակություն չունի յեվրոպական հկոնոմիկան, տեխ-
նիկան, բանվորական շարժման կազմությունը, ամեն տեսակի գրակա-
նություն՝ բելերքիստական կամ գիտական՝ ուսումնառիրելու հա-
մար: Յերբ մյուս պայմանները հավասար են, ինարկի, ավելի
հեշտ է Յեվրոպան ուսումնառիրել՝ գտնվելով այնտեղ: Բայց այն
մինուսը, վոր ստացվում է յերկար ժամանակ Յեվրոպայում
չգտնվածների մոտ, մեծ նշանակություն չունի: Ընդհակառակը,
յես շատ ընկերներ եմ ճանաչում, վորոնք 20 տարի ապրել են
արտասահմանում, ապրել են վորեւ տեղ Շառլոտահնըուրգում կամ
Լատինական թաղամասում³⁴, տարբներով նստել են սրճարաննե-
րում, գարեջուր են խմել և այնուամենայնիվ չեն կարողացել
Յեվրոպան ուսումնառիրել և չեն հասկացել նրան:

ԺԱՆՐԹԱԳՐԻԹՅՈՒՆՆԵՐ

1. Լոնդոնի համագումարը—ԽՍԴԲԿ (Մուսաստանի սոցիալ-դեմոկրա-
տական բանվորական կուսակցության) Վ համագումարը աեղի ունեցավ 1907 թ.
ամառը Լոնդոնում (Սյն տարբիներին բոլցիկները գեռես սոցիալ-դեմոկրատ-
կար երին կոչվում): Համագումարը խիստ պայքարի առավարից եր բոլցիկների
հեղափոխական գծի և մենչեկների ոպորտունիզմի միջև: Համագումարում ծիշ-
կոն (աես անվանացանկը) լինական սոցիալ-դեմոկրատների պատվիրակության
գեղագարներից մեկն եր. այդ պատվիրակությունը ճշշա և, անհետեղականու-
րեն, մի շաբթ տպանաւուներով ու վերապահումներով, պաշտպանում եր բոլց-
իկներին: Համագումարում հիմնականում հաղթանակից բոլցիկների գիծը
համագումարի տրանսգրությունները հրաարակվեցին 1909 թ. Փարիզում և
դրանից հետո առաջին անգամ վերահրատարակվեցին 1933 թ. Կուսօնրատի
կողմից:

2. «Ենգալ մարքսիստներ» կոչվում եր անցյալ դարի 90-ական թվական-
ների սուսական բուրժուական ինտելեկտունիայի մի հատուկ խումբը. Այդ
խումբը վոչ մի մասնակցություն չեր ունենում բանվորական կազմակերպու-
թյունների բնութագական հեղափոխական պայքարին:

Նրանք իրենց գրքերում ու հոգվածներում խոսքով ընդունում երին
մարքսիզմը, բայց գործով դուրս ելին վանում մարքսիզմի հեղափոխական հո-
գին, մարքսիզմից վերցնելով միայն այն միտքը, թե Մուսատանում այն տա-
պէն անխուսափելուն պահպան կապիտալիզմը նրանք այս միտքը լինելու այս միտքը խեղաթյուրելու ոգությումը աջակատու ելին համոզի բանվորներին,
վոր հրաժարվեն գտակալուզային պայքարից, քրնաւնին իրենց անկուլտուրա-
կանությունը և զնան կապիտալիզմի մաս սովորելու:

3. «Ենչ անել» («Մեր շարժման ցավոտ հարցերը»)—Լենինը գրել է
1901 թ. աշնանը—1902 թ. ձմեռը (Լենին, հատ. IV, Յ-բ-բ-հրատ.):

«Մեկ քայլ առաջ, յերկու քայլ հետ» («Ճգնաժամը միը կուսակցության
մեջ»)—Լենինը գրել է 1904 թ. փեարքար-մայիսին (Լենին, հատ. VI, Յ-բ-
հրատ.):

4. Այսուեղ խոսքը գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության
մատին և Յնդհուպ մինչեւ իմայիրեական պատերազմը այդ կուսակցու-
թյունը (ինչպես զերիք մինչպատերազմյան II ինտերնացիոնալի մյուս բոլոր
կուսակցությունները բոլցիկներից զատ) միավորում եր ովորաւնիուններին
հեղափոխական սոցիալիստների հետ:

Իմպերիալիստական պատերազմի և Գերմանիայի 1918 թ. հեղափուու-
թյան հետևանքով ելին գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությու-
ուուք պատականք գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության (բառ-
ցա պատականք գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության (կենտ-

շանի ովարառունիստներ) և գերմանական կոմունիստական կուսակցության Այդպիսի գրությունը եղ նույնպես 1920 թ., յերբ ընկ. Ստալինը գրում եր տվյալ նույնամբ:

Հետազայում (1922 թ. սեպտեմբերին) անկախների կուսակցությունը և սոցիալ-գեներատական կուսակցությունը միացան և միասին գլորվեցին մինչ ոսպիա-Փաշիկմ:

Ե. 1917 թ. հուլիսի 8-օրը Գետերքուղղում տեղի ելին ունենում բանվորների ու զինվորների տարերային ցույցեր, գործնք (բանվորներն ու զինվորները) պահանջում ելին, վոր իշխանությունն անցնի փորձուրդների ձևոք, Մեր կուսակցությունը Գետերքուղղում մասսաներին հետ եր պահում այդ գողաժամ յելույթից, վորովհետեւ պրովինցիայում և ուղղաճակատում աշխատավորների մասսաներում տակավին ուժեղ ելին մանր-բուրժուական արամագությունները և ուղուրդների ներսում մեր կուսակցությունն այդ ժամանակաշրջանում դեռ մեծամասնություն չուներ:

Բայց քանի վոր մասսաները համեմու յելան, ապա կուսակցությունն ել գնաց Նրանց հետ, զեկավերելով նրանց շարժումը:

Հուբետուկան ժամանակավոր կառուվացրությունը գնդակոծեց ցույցերը և անշնչիկների և եւերների ողնությամբ արշավանք սկսեց բանվոր գասակարգի, հեղափոխական զինվորների դիմ և մանավանդ բոլցեկների զիմ: «Պահան» ափերվեց, հրաման արձակվեց Լենինին ձեւքակալելու մասին. նա պետք եւ թագնվեց ընդհատակում: Բայց կուսակցությունը՝ չնայած դաժան հայտաճախներին՝ կարողացավ միքանի ամսվա ընթացքում ամբողջ յերկրում տշխատավորների մեծամասնությունն իր կողմը նվաճել և տառապել ժամանակավոր կառավարությունը:

6. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո պատերազմող բոլոր յերկիրներին Անրերդային պետության կողմից արած հաջորդական արձագանքը իմպերիալիստական Գերմանիան: Նա վճռեց ոգտվել այդ առաջարկից և նրանից, վոր տակավին չամրապնդված լորերդային իշխանությունն այն ժամանակ չեր կարող պատերազմել վարպետի նորերդ. իշխանության վզին փաթաթի հաջառության կողովախիչ պայմանները Պատերազմ մղել պահանջող և հաջոտության մահապաղ ընկունումը սարդարի յենթարկող Տրոցիկու և Շմախտի արկածախնդրական քաղաքականության պատճառով գերմանացիների ևս վարած բանակցությունների ձգձգվելու հետևանքով՝ գերմանական զորքը քերմանական զորքը 1918 թ. փետրվարի 18-ին հարձակում սկսեցին և սպառնալիքի տակ զրին խորհրդային իշխանության գոյությունը: Բայց կուսակցությունը Լենինի զեկավարությամբ իր դիմք տարավ պառակտումով սպառնացող Շմախտի դիմ մղած վճռեկան պայմանում և գուտարա ձեռք բերեց խորհրդային իշխանությունն ամրապնդելու և Կարմիր բանակը կազմակերպելու համար Քրեստ-Լիտովկում 1918 թ. մարտի 3-ին կնքած Շաբախտառական հաշուությունը և ամիս անց վերացվեց Գերմանիայի հեղափոխությամբ, վոր փայլուն կերպով համատակեց լենինի և կուսակցության տակտիկայի իրավաշիռությունը:

7. Անտառա (Քրանուրեն՝ համաձայնություն) — Անդիխայի, Ֆրանսիայի և տարական Պուլասաւանի իմպերիալիստական կառավարությունների 1907 թ. ձեւակերպած համաձայնությունը՝ 1914—1918 թ. թ. պատերազմի ժամանակ Անտառա գարձակ մի դաշինք, վորը մի շաբթ ուրիշ յերկիրների ոգնությամբ Զախշախից իմպերիալիստական Գերմանիային և նրա դաշնակիցներին չոկ-

տեմբերից հետո Անտառա կտղմակերպեց Խորհրդային հանրապետության բլոկադը, նրա գետ ուղղված հնաբերելներան և սպիտակ-դվարդի տակն ըմբառությունը:

Կըախով վերջացան Անտառայի փորձերը՝ իմպերիալիկը և Խորհրդային հանրապետությունը: (Այդ մասին տես ընկ. Ստալինի հոգվածը՝ «Անտառայի նոր արշավանքը Բուլևարանի վրա», աղապրված և «Правда»-յում 1920 թ. մայիսին և արտապայմանը 1933 թ. Ա. Ռաբինովիչի «Իշորա ցացանուար» գրքում, Պարտզամատ, 1933 թ.)

8. Մամուֆակտուրային ժամանակաշրջան—արհեստավորական արհեստանոցից կապիտալատական Փաբրիկային անցնելու ժամանակաշրջանը (Արեմայան Ցելիպաղայում մատափարակում XVII—XVIII դ. դ.): Մամուֆակտուրաները—լուղոր ձեւնաբերկություններ են, վորոնց հերերերն արդեն սկսեցին մասսայական ձեռվ վարձու արխտանք կիրառել, բայց տակավին արհեստավային և վոչ մերենային տեխնիկայի հիման վրա:

9. Այսունի իսուքը 1904—1905 թ. թ. ուղևագրական սպատերազմում տրական բանակի կրած պարտությունների մասին եւ:

10. 1905 թ. առաջին կիսի հեղափոխական գեղքերի ձեղման տակ վախեցած ինքնակալությունը փորձեց հեղափոխությունը կասեցնել աննշանմի զիջումունիւ, այս եւ հայարարելով, թե ցարական կռավարությանը կիսազմակերպվում է ընտրական մի օրգան: Դուման Ըստ այդ Դումայի վերաբեր կասանակորության, վոր մշակել եր ցարական մինչեւար Բուլութինը, աշխատավորները Դուման մուտք չունելին, իսկ Դուման ինքը միմիպայն խորհրդական իրավունքները ունենք՝ չեր կարող ճրն որենքները վերացնել և նորեքը հրատարակել այլ կարող եր կառավարությանը խորհութքներ տալ միայն, վորին վերջինս կարող եր և ուղաքություն չգարձնելու:

